Երկար փնտրտուքից հետո պարզեցինք, որ «Թերեզա Ասատրյան» ազգանունով ներկայացող անձը, որին լրագրողները հանդիպում էին շրջիկ պատարագների ժամանակ, անձնագրով Թերեզա Սարգսյան է: Ըստ մեղադրանքի, նա պարտադիր զինծառայությունից ազատելու համար նորակոչիկի հորից վերցրել է 5 հազար դոլար գումար, ինչի համար նստած է:

Կարդացեք՝ էջ 4



Հռոմի պապի ուղերձը՝ Զայեդ մրցանակաբաշխության առիթով, հրապարակված է Սուրբ Աթոռի կայքում, մի քանի լեզվով՝ անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, պորտուգալերեն: Սակայն Պապը ոչ Փաշինյանին, ոչ Ալիեւին արժանի չի համարել անհատապես անդրադառնալու կամ նրանց մասին առանձնահատուկ դիտարկում անելու:

Կարդացեք՝ էջ 5

Մարտունու համայնքապետի առաջին տեղակալ Վահագն Դավթյանը մեղադրվում է մաքսանենգ ճանապարհով ապրանքներ ներկրելու, հարկերը թաքցնելու համար: Մաքսային ձեւակերպումից դուրս մնացած ապրանքների մի մասը հայտնաբերվել է նրա տան բակում: «Ես ընկել եմ կրակը, անտեղի ցուցմունք չտալու համար, թե ապրանք բերողն ով է»:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 14 (4149), 7 փետրվար, շաբաթ, 2026

www.hraparak.am

2022թ. սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանի զինուժի կողմից Հայաստանի վրա հարձակումից հետո Գեղարքունիքի մարզի Ներքին Շորժա ու Վերին Շորժա համայնքների որոշ բնակիչներ հեռացան, ովքեր էլ մնացին՝ ձմռան ամիսներին գնում են, գալիս են միայն ամռան սեզոնին: Տեղացիներն ասում են, որ այս համայնքների մշակվող հողերն այժմ գտնվում են ադրբեջանցիների վերահսկողության տակ: Ներքին Շորժայի վարչական ղեկավար Արամ Մինասյանը մեզ ասաց. «Ոչ մի բնակիչ չկա, ով էլ եղել է, հիմա Վարդենիսում կամ Ակունքում են ապրում: Երբ գարունը բացվի, բնակիչները կգան»: Ինչո՞ւ չեն բնակվում՝ ճանապարհները փակ են: «Երեւի հարմար չի՝ բուքը շատ է, ճանապարհները փակ են: Ես անձամբ Վարդենիսում եմ բնակվում: 2 տարի է, ինչ այս վիճակն է: Մինչեւ 2020 թիվը 13 ընտանիք բնակվում էր, 20 կանգուն տուն ունենք, մարդիկ հողագործությամբ եւ անասնապահությամբ էին զբաղվում»: Իսկ համայնքին պատկանող գյուղատնտեսական հողերի ինչ-որ մաս անցե՞լ է ադրբեջանցիների վերահսկողության տակ: «Բարձունքներից, որտեղ հսկում են ադրբեջանցիները, ամեն ինչ տեսանելի է: Նույնը մեր սարից է երեւում: 2 սարերի արանքում պոստեր են: Էդ տարածքում մենք վարելահող չունենք, էդտեղ արոտավայր է: Առաջ էդ տարածքները որ կային՝ մինչեւ սովետի ժամանակվա սահմանը, իրենք առաջ են եկել, բարձրացել են սարը՝ տեսանելի է: Մարդիկ ռիսկ չեն անում, որ գնան այդ հատվածը, որը հսկվում է եւ մեր կողմից, եւ ադրբեջանցիների»: Վերին Շորժայի վարչական ղեկավար Արտեմ Երանոսյանը հրաժարվեց պատասխանել մեր հարցերին, ասաց, որ հիվանդ է: Այրք համայնքի ղեկավար Կամո Ղազարյանն ասաց. «Այդ հարցերն ուղղեք Վարդենիսի համայնքապետարանին, մենք իրավասու չենք այդպիսի հարցերի պատասխանել»:

Հշխող թիմում, նախընտրական ցուցակի ձեւավորման գործընթացին զուգահեռ, ակտիվ աշխատանքներ են տանում նաեւ նախընտրական կարգախոս, երգ, սիմվոլիկաներ ընտրելու ուղղություններով: Այս հարցերով խումբ է աշխատում՝ Վահագն Ալեքսանյանի գլխավորությամբ: Կարծես վերջնական եզրահանգման են եկել, որ նախընտրական երգը լինելու է Փաշինյանի հեղինակած «Իրական Հայաստան» բանաստեղծության հիման վրա գրված երգը, որը «Վարչաբենդի» հիմնն է նաեւ դարձել, իսկ քարոզչական սիմվոլիկան, ինչպես նախապես գրել էինք, լինելու է Փաշինյանի՝ մատներով սրտիկը: Փոխարենը կարգախոսի հարցում դեռ վերջնական որոշման չեն եկել, բայց այն լինելու է խաղաղության վերաբերյալ՝ «խաղաղություն» բառի կիրառմամբ:

Երկու բեւեռ

Ռուբեն Վարդանյանի որդին նամակ է հղել ԱՄՆ փոխնախագահին, որը մոտ օրերս այցելելու է տարածաշրջան, եւ կոչ արել՝ ադրբեջանական գերության մեջ գտնվող քրիստոնյա հայերին ազատ արձակելուն ուղղված քայլեր ձեռնարկել: Իր հորը չի առանձնացրել՝ դիմել է բոլորի համար: Թուրքիայում բնակվող մի կին էլ, որին, ըստ որոշ լուրերի, ՔՊ-ական իշխանությունն է հովանավորում, համացանցում մի նողկալի նամակ է տարածել՝ ուղղված Ռուբեն Վարդանյանի կնոջը՝ Վերոնիկային: Տգեղ որակումներով, փողոցային բառերով, գարշելի հեգնանքով: Դիվանագետների խորհուրդը, Ամերիկայի հայկական համագումարը, Վազգեն Մանուկյանը, մեծ թվով կազմակերպություններ ու գործիչներ վրդովված են Բաքվի հրեշավոր պահվածքից ու հրապարակված դատավճիռներից, իսկ ՔՊ կոչվող խառնամբոխից ոչ մի ծպտուն: Նրանք նորից Եկեղեցու «միսն են ծամում», մեկը հայտնում է, որ ընդունել է Եվրոպական ներդրումային բանկի ներկայացուցիչներին, մյուսը Շվեդիայում գործուղման է, երրորդը դեռ Սարգիս Կարապետյանի հայտարարությունն է քննարկում, չորրորդն իբր պետական լեզվի համար է մտահոգված: Իսկ այն, որ պետական բարձր պաշտոններ զբաղեցրած հայ մարդկանց արդեն 2 տարուց ավելի խոշտանգում են Բաքվի բանտերում, «չեն նկատում»: Ահա՝ այսպիսի ծուռ հայելիների աշխարհում ենք հայտնվել մենք: Մեզ իրենց կյանքն ու վարքն են անհասկանալի, իրենց՝ մեր վրդովմունքն ու հույզերը: Եվ նորից Հայաստանում ունենք բեւեռացված ու տարբեր հոգսերով ապրող, միմյանցից անհաղորդ հասարակություն եւ իշխանություն: Ունենք կուշտ կերածների, մեր հարկերից սնվողների իշխանություն եւ երկրի դարդով տառապողների, հոգեկան անդորրը կորցրածների, անապահովների ու հուսահատների հասարակություն, որը չգիտի՝ ինչպես հաղթահարել այս հուսահատության ու դժվարությունների շրջանը:

ՔՊ կուսակցության վարչության վերջին նիստերից հետո հրապարակվող տեսանյութերում երեւում է, որ նիստերին մասնակցում է նաեւ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, որը վարչության անդամ չէ: Թե ինչու է նա բոլոր նիստերին ներկա, վարչությունից ասացին, որ Նարեկ Մկրտչյանի՝ ԱՄՆ դեսպան նշանակվելուց հետո Խանդանյանն է նշանակվել ՔՊ արտաքին կապերի պատասխանատու եւ վարչության նիստերին ի պաշտոնե է ներկա գտնվում: Նրա վրա են դրված նաեւ «Եվրոպայի ազատականների եւ ժողովրդավարների դաշինք» կուսակցության (ALDE) հետ համագործակցության աշխատանքները, որի անդամն է ՔՊ-ն: Նշենք, որ հայաստանյան կուսակցություններից ԱԼԴԵ-ի անդամ են ՀԱԿ-ը եւ ԼՀԿ-ն: Սակայն կուսակցությունում կարծում են, որ Խանդանյանը Մկրտչյանի պես «չի ձգում», ասում են՝ ԱՄՆ գործուղված Մկրտչյանը լավ էր կատարում այդ աշխատանքները:

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԱՐՇԱՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կկայանա՞ արդյոք Ավստրիայում փետրվարի 16-19-ը նախատեսված Եպիսկոպոսաց ժողովը: Մայր Աթոռից չնայած չեն շտապում հստակ պատասխանել՝ Հոգեւոր խորհրդի անդամ 6 եպիսկոպոսների նկատմամբ երկրից բացակայելու արգելք կիրառելուց հետո, սակայն, որոշ տեղեկություններով, եպիսկոպոսների արմատական թեւը պնդում է, որ այն ամեն գնով կայանա, թեկուզ՝ առցանց տարբերակով, եթե թույլ չտան, որ հոգեւորականները մեկնեն Ավստրիա: Նրանք կարծում են, որ Վեհափառի կողմից հերթական զիջումը կլինի ժողովի չեղարկումը՝ ի վնաս Եկեղեցու: Հիշեցնենք, որ դեռ անցած տարեվերջին էին Եպիսկոպոսաց ժողովը պատրաստվում հրավիրել, որը չեղարկվեց իշխանական ճնշումների ներքո: Գուցե Վեհափառը հույս ունի, իրավիճակը չսրելով, Փաշինյանին բերել կառուցողական դաշտ, սակայն նա քանիցս կրկնել է, որ միայն կաթողիկոսի հեռանալու հարցի շուրջ կարող է բանակցել եկեղեցու սպասավորների հետ: Մյուս կողմից՝ նախանձելի վիճակում չէ նաեւ Փաշինյանը՝ իր սկսած արշավը դոփում է տեղում, թիմակիցները թաքուն խոստովանում են, որ պարտվել են կաթողիկոսի դեմ հայտարարած պատերազմում, սակայն դեռ հույս ունեն, որ «կհաղթեն», եթե հաղթեն հունիսի ընտրություններում եւ իշխանությունը պահեն: Այդ ժամանակ արդեն Վեհափառի գնալը կդառնա օրերի, անգամ՝ ժամերի հարց:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ Է ԿԱՊՈՒՄ

Հայաստանի ներքաղաքական կյանքում նախընտրական պայքարը սկսվել է դեռ նախորդ տարվանից: Ընդդիմադիր ուժերն այցելում են մարզեր, քննարկումներ են ընթանում՝ հավանական կոնսոլիդացիաների շուրջ, իսկ Նիկոլ Փաշինյանը նվագում է, երգում-պարում, ձվածեղ պատրաստում, պատարագների գնում: Օրերս էլ Ալիեւի հետ խաղաղության մրցանակ ստացավ, իսկ ժամեր անց Բաքվում հայ ռազմաքաղաքական էլիտան դատապարտվեց ցմահ ազատազրկման, չնայած իշխանությունը վստահեցնում է, որ խաղաղության դարաշրջանը մեկնարկել է, անվտանգության ռիսկերն իրենք չեզոքացրել են:

Զրուցել ենք նախկին վարչապետ **Խոսրով Հարությունյանի** հետ: «Դժվար է ասելը, թե ինչ հանգուցալուծում կստանա այս ամենը: Մի բան է ակնհայտ, որ պետք է սպասենք ընտրությունների արդյունքներին, ինչից հետո դրանց մասին կարող ենք վերլուծություններ անել: Սա՝ որպես նախաբան: Ինչ վերաբերում է բուն ներքաղաքական իրադարձությունների զարգացմանը, բնական է, որ հանրության ընդդիմադիր հատվածը, ինչպես նաեւ ընդդիմադիր քաղաքական ուժերը պետք է փորձեն նախապատրաստվել առաջիկա ընտրություններին: Ենթադրում եմ, որ բոլորն էլ հասկանում են, որ առաջիկա ընտրությունները խիստ կարեւոր են, ճակատագրական՝ բառի բուն իմաստով: Առանց չափազանցության կարող ենք ասել, որ խոսքը Հայաստանի լինել-չլինելու մասին է: Իմ պատկերացմամբ՝ հանրության մոտ, անգամ Երեւանում, այլ ոչ թե միայն սահմանամերձ շրջաններում, մարդիկ ամենաշատը կարեւորում են անվտանգությունը: Այն հարցումները, որոնց համաձայն Նիկոլ Փաշինյանն ունի բավականին ցածր վարկանիշ, դա արդեն փաստում է այն մասին, որ հանրության զգալի մասն այլեւս չի վստահում գործող իշխանությանը:

Ինչու, որովհետեւ հենց այդ իշխանության գործողությունների կամ անգործության արդյունքում՝ նորանկախ Հայաստանը հայտնվել է պետականության կորստի վտանգի առջեւ, մարդիկ գիտակցում են, որ մենք կործանարար վտանգների տակ ենք հայտնվել: Գրեթե բոլոր ռազմավարական բարձունքները հայտնվել են ադրբեջանական վերահսկողության տակ, իսկ դա ի՞նչ է, եթե ոչ ռեալ սպառնալիք Հայաստանի տարածքային ամբողջականությանը: Հանրության շրջանում այս հարցի շուրջ կա կոնսենսուս, անկախ այն բանից, թե ինչպես է մտածում երիտասարդությունը, հանրային հատվածի տպավորիչ հատվածում կա տարակուսանք: Մարդիկ մտահոգված են շատ, խոսքն անվտանգության ռիսկերի մասին է, ինչը փաստում է այն հանգամանքը, որ իշխանությունների կողմից պարբերաբար հրապարակ բերվող խաղաղության օրակարգը, որն իշխանությունները համարում են անշրջելի, հասարակության մոտ հավատ եւ վստահություն չի ներշնչում:

Տնտեսական զարգացման վերաբերյալ բավականին լուրջ առաջարկություններ ենք լսում ընդդիմադիր որոշ շրջանակների կողմից: Այդ առաջարկները, ըստ իս, ունեն բավականին մեծ հեռանկար եւ Հայաստանին կարող են լայն հնարավորություններ ընձեռել: Առաջարկվում են լուծումներ՝ սոցիալական ոլորտի հետ կապված, որոնք եւս բավականին լուրջ են, սակայն եկեք ընդունենք, որ այն կարող է կյանքի կոչվել մեկ պարագայում՝ եթե ՀՀ տարածքը դառնա անվտանգ: Եկեք համաձայնենք, որ եթե պետությունն անվտանգ չէ, ցանկացած տնտեսական ծրագիր, անգամ ամենաիդեալականը, դատապարտված է ձախողման: Սա պարզ իրողություն է, որի հետ պետք է հաշվի նստել: Համոզված եմ, որ, անկախ այն բանից, թե ով է լինելու իշխանությունը, հանրությունն ընտրություններից հետո մեկ բան է պահանջելու՝ անվտանգություն: Սա ակնհայտ հետեւաբար, հանրությունն անվտանգության երաշխիքների սպասելիք ունի ընդդիմադիրներից: Ի դեպ, բոլոր այն ուժերը, որոնք այսօր Հայաստանի իշխանությունների խաղաղության ջրաղացին ջուր են լցնում, շահագրգռված են, որ Հայաստանում իշխանափոխություն տեղի չունենա, նույնիսկ ամենասահմանադրական ճանապարհով: Վենսը գալիս է Հայաստան, եկեք ընդունենք, որ սա մեր պատմության ընթացքում բացառիկ բան է, բայց նա գալիս է Հայաստան, որ հետո գնա Ադրբեջան, եւ նրա նպատակն ակնհայտ է՝ ամրապնդել ԱՄՆ-ի ներկայությունը Հայաստանում: Ինստիտուցիոնալ առումով այս պրոցեսները որքանո՞վ են երաշխավորում մեր երկրի անվտանգությունը: Այս բոլոր գործողությունների արդյունքում՝ Ադրբեջանի ռազմական նկրտումները հօդս չեն ցնդում, ոչ էլ Ադրբեջանի իշխանությունների համար դառնում են անցանկալի, պարզապես դրանք ժամանակավորապես հետաձգվում են, բայց ինստիտուցիոնալ որեւէ նախադրյալ ես չեմ տեսնում, որ ինձ, որպես շարքային ՀՀ քաղաքացու, կարող է ներշնչել, որ ԱՄՆ-ն ինձ երկարաժամկետ խաղաղություն է երաշխավորել: ԱՄՆ-ն չի էլ թաքցնում, որ Հայաստան իր ներխուժման հիմնական նպատակը Ռուսաստանին եւ Իրանին տարածաշրջանից դուրս թողնելն է, ինչպես նաեւ՝ դիմագրավել հնարավոր չինական տնտեսական զարգացումները: Եկեք համաձայնենք, որ այս ամենը մեզ անվտանգություն չի խոստանում: Նույն ԱՄՆ-ն այդ նպատակներին կարող է հասնել նաեւ Ադրբեջանի եւ Թուրքիայի միջոցով: Կարող է գալ մի շրջան, որ ԱՄՆ-ն այդ առաքելությունը հենց նրանց զիջի»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻՑ 80-ԱԿԱՆՆԵՐԻՆ ԵԿԱԾՆԵՐԻՆ ՍՏԻՊՈՒՄ ԵՆ ԱՁԱՏԵԼ ՇԵՆՔԸ

Դերթական սոցիալական սկանդալն է հասունանում Դարբնիկ գյուղում եւ պայթելու է կառավարության շենքի մոտ: Մասիս խոշորացված համայնքի Դարբնիկ բնակավայրում ապրող մոտ 45 փախստական, որոնք Ադրբեջանից ներգաղթել են 80-ականների վերջերին, պատրաստվում են մոտակա հինգշաբթի գնալ կառավարության շենքի մոտ՝ հույսով, որ գոնե այնտեղ իրենց ձայնը լսելի կդառնա նիկոլական իշխանության համար: 38 տարին բավարար չէր Հայաստանի Հանրապետության բոլոր իշխանությունների համար, որ լուծեին առաջին արցախյան պատերազմի փախստականների հարցը: Ինչպես 38 տարի առաջ, նրանք այսօր էլ չունեն իրենց բնակարանը: Ծվարել են Անդրանիկի 4-րդ փողոցում՝ «Քոլեջ» կոչվող շենքում, որը ՆԳՆ Միգրացիոն ծառայության բալանսում է, ասել է թե՝ պետական գույք է: Ով ինչպես կարողացել է, նորոգել է բնակարանը, կահավորել, սպասել է այն երջանիկ ժամանակներին, երբ իրեն թույլ կտան սեփականաշնորհել կացարանը: Դրա փոխարեն նախկին փախստականների զավակներին այցելել են «Օթեւան» կոչվող ինչ-որ ՊՈԱԿ-ից եւ ստիպում են անհասկանալի պայմանագիր կնքել: Այս մասին «Հրապարակին» հայտնեցին «Քոլեջի» բնակիչները:

Պատմում է **Աննա Եղիազարյանը**, որի ծնողները փախստականներ են՝ Ադրբեջանից ներգաղթած. «2011 թվականից մեզ տվել են այդ բնակարանները, մենք ապրում ենք: Փետրվարի 4-ին եկել են այդ կազմակերպությունից ու մեզ ասում են, որ շենքը հանձնված է իրենց: Մեզ ինչ-որ պայմանագրեր են դեմ տալիս, ստիպում են, որ կնքենք՝ 1 տարի ժամկետով: Այդ պայմանագրում ոչինչ ի օգուտ բնակչի չկա գրված: Բոլոր բնակիչները խուճապահար են, անհանգստացած, որովհետեւ չգիտեն, թե մեկ տարի հետո ինչ կլինի իրենց հետ: Մենք՝ բոլորս, այդ բնակարանների համար ներդրում ունենք արած, վերանորոգել ենք, կահավորել ենք: Իսկ այդ պայմանագրերում գրված է, որ մենք իրավունք ունենք ապրելու, բայց բանալիները պետք է տանք իրենց, որ եթե խնդիրներ լինեն, կռիվ կամ մի բան, իրենք գան ու որոշեն, թե ով է մեղավոր, ու եթե լինեն խնդիրներ, իրենք մեզ կարող են հանել տներից: Ասում են՝ եթե անգամ չստորագրեք, օրենքի ուժով գալու ենք, ձեզ դուրս հանենք»:

2011 թվականին տրված փաստաթղթերում շեշտված է, որ փախստականներին բնակարանները հատկացվում են առանց սեփականության իրավունքի: Այժմ մարդիկ վախենում են, որ կմնան առանց կացարանի: Նրանք փորձում են զանգահարել «Օթեւան» ՊՈԱԿ տնօրենին, բայց նշված հեռախոսահամարները չեն պատասխանում: Փորձում են տնօրենին համացանցում գտնել, բայց այնտեղ, որպես «Օթեւանի» տնօրենի ԺՊ, նշված է ոմն Էդգար Փարվանյան, մինչդեռ իրենց պայմանագրերում այլ ԺՊ-ի անուն է՝ Ա. Հովհաննիսյան: «Մեզ բացարձակ արհամարհում են, եթե այսպես շարունակվի, մենք մյուս շաբաթ գալու ենք Փաշինյանի մոտ»,- ասում է նախկին փախստականների դուստր Աննա Եղիազարյանը:

«Կացարանի տրամադրման եւ սոցիալական ծառայությունների տրամադրման մասին» բնակիչներին առաջարկվող պայմանագրում նշված է. «Բնակիչը պարտավորվում է վերադարձնել կացարանը պայմանագրի գործողության ավարտին նույն վիճակում, հաշվի առնելով բնականոն մաշվածությունը»: Սա նշանակում է, որ մեկ տարուց, իսկ պայմանագրի ժամկետը մինչեւ 2027 թվականի փետրվարի 1-ն է, «Օթեւան» կազմակերպությունը կարող է պահանջել, որ մարդիկ դուրս գան տներից, եւ նրանք պարտավոր են կատարել պահանջը: Բնակչի պարտավորությունների թվում նշվում է կացարանի բանալին ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնելը: Այս նվաստացուցիչ պայմաններին բնակիչները, բնականաբար, չեն համաձայնում:

Աննա Եղիազարյանը հարեւանների հետ եղել է Դարբնիկի վարչական ղեկավար Դավիթ Գզիրյանի մոտ, սակայն վերջինս ասել է, որ ոչնչով չի կարող օգնել համագյուղացիներին, որ ինքն այդ շենքի հետ կապ չունի: «Հրապարակի» հետ զրույցում **Դավիթ Գզիրյանն** ասաց. «Այո, ես կապ չունեմ այդ խնդրի հետ: Գիտեմ, որ գալիս են, պայմանագրեր են կնքում, ես չգիտեմ՝ ինչ կարող եմ անել նրանց համար»:

Բացի արցախյան առաջին պատերազմի ժամանակների փախստականներից, այստեղ ապրում են նաեւ Սիրիայից, Իրաքից, այլ երկրներից ներգաղթածներ, ՆԳՆ լրատվության պատասխանատուները խոստացան պարզաբանել խնդիրը: Իսկ մինչ սպասում ենք նրանց պատասխանին, հիշեցնենք, որ 2025 թվականի սեպտեմբերին կառավարությունը որոշում ընդունեց, որով պետք է բարելավեր «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց» սոցիալական ծառայությունների մատուցման որակը: Այն ժամանակ հայտարարեցին, թե նախատեսվում է ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներին դուրս բերել ժամանակավոր տեղավորման կենտրոններից եւ ապահովել ժամանակավոր կացարաններով: Ապա սոցապնախարարության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ը լուծարվեց, եւ մարդկանց կացարաններով ապահովելու ծառայությունը դրվեց «Օթեւան» ՊՈԱԿ-ի վրա: Փաստորեն, այսպես է բարելավվում դժվարին իրավիճակներում հայտնվածների կյանքը, նրանցից խլում են իրենց օջախների բանալիները եւ զգուշացնում, որ մեկ տարի անց պատրաստ լինեն դուրս գալ տներից:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՄՈՍԿՎԱ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եռօրյա մոսկովյան այցը տարբեր արձագանքների արժանացավ: Հայաստանյան ակտիվ քաղաքական-հասարակական մի խումբ ոգեւորությամբ «արձանագրեց», որ Սիմոնյանին «արժանի» ընդունելություն են ցուցաբերել եւ երեսին նետել մեր երկրում տիրող խայտառակ իրավիճակի՝ քաղբանտարկյալների առկայության, գործարար Սամվել Կարապետյանի եւ Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի նկատմամբ հետապնդումների, Եկեղեցու դեմ գրոհի ու երկու լարի վրա խաղալու անթույլատրելիության մասին դիտարկումներ, իսկ իշխանական շրջանակները, ճիշտ հակառակը՝ ցնցված էին ԱԺ նախագահի խրոխտ հայացքից ու ռուս գործընկերներին ուղղված «ինքնիշխան» պատասխաններից: Նկատենք, սակայն, որ քաղբանտարկյալների, Եկեղեցու եւ այլ թեմաներով ոչ թե պաշտոնյաներն են զրույցներ ունեցել՝ գոնե եթե եղել է, դրանք չեն հրապարակայնացվել, այլ պաշտոնական հանդիպումներից հետո կայացած բրիֆինգում են ռուս լրագրողներն ուղղել ԱԺ նախագահին: Թեեւ սա հաշված օրեր առաջ «զադնի դրեց» իր երբեմնի կոշտ ձեւակերպումներից՝ հայտարարելով, որ պետք է «հիբրիդային պատերազմ» ձեւակերպումից հրաժարվել, քանի որ «պատերազմ»-ը լավ տերմին չէ, առաջարկեց այն փոխարինել «հարձակում» բառով, անգամ հայտարարեց, որ իրենց իշխանությունն էլ կարող է սխալվել նման տերմիններ օգտագործելով: Նախօրեին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ էլ ԱԺ նախագահը, մեղմ ասած, հաշիվ չպահանջեց այդ հիբրիդային հարձակումների համար, որից 24/7 ռեժիմով բողոքում են ՔՊ-ականները եւ անգամ եվրոպացիներին են գանգատվում, այլ սկսեց արդարանալ, երբ Լավրովը հայտարարեց, որ Մոսկվայի համար տարօրինակ է պարբերաբար լսել Հայաստանի դեմ հյուսիսից նախապատրաստվող, իր ձեւակերպմամբ, «առասպելական հարձակումների» մասին այդ հայտարարությունները:

Նրա խոսքով՝ անհասկանալի են նաեւ այն պնդումները, թե Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը կարող է Հայաստանի համար գոյաբանական սպառնալիք հանդիսանալ: «Հայաստանը հետաքրքրված է Ռուսաստանի հետ կապերով, եւ Հայաստանում այլ ըմբռնում չկա: Միեւնույն ժամանակ, պատերազմից հետո առաջին օրերից ի վեր, հասկանալի պատճառներով, մենք փորձում ենք կայունացնել մեր տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Իմ կարծիքով, վատ չի ստացվում»,- ասել է Սիմոնյանը:

Անդրադառնալով ՀԱՊԿ-ի հետ խնդիրներին՝ նա նշել է, որ Հայաստանն ունի հարցեր, որոնց պատասխանն այդպես էլ չի ստացել: «Հյուսիսային հարձակումների» մասով էլ շեշտել է, որ Հայաստանին անհանգստացնում է այն հռետորաբանությունը, որը հնչում է ռուսական հանրային միջավայրում: «Քաղաքական գործիչներն այսօր կան, վաղը նրանց կարող են փոխարինել ուրիշները, սակայն հայկական հասարակության մեջ շատ բացասաբար են արձագանքում Մոսկվայից հնչող հայտարարություններին: Այդպես են արձագանքում, քանի որ Մոսկվան կարեւոր է, եւ մտածողությունը, որ Մոսկվան դաշնակից է, եղել է ու կա: Շատ ցավալի է լսել նման արտահայտություններ»,- ասել է Սիմոնյանը:

ՄԻ ԿՈՂՄՆ ԱՍՈՒՄ Է՝ «А ТЕПЕРЬ Я НАТАША», ՄՅՈՒՍ ԿՈՂՄԸ՝ «А ТЕПЕРЬ ОБМАНИ МЕНЯ»

Ռուսաստանում ընդունված մեթոդ է՝ ինչը որ իշխանությունը չի ասում իր շուրթերով, ասում են Կրեմլին կից քաղաքագետները եւ վերահսկելի լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Ինչպես հայտնի է՝ Ալեն Սիմոնյանը գործող իշխանության բարձրաստիճան այրերից ամենաշատն է աչքի ընկել հակառուսական հայտարարություններով: Նա առաջինն էր, որ հայտարարեց, թե Ռուսաստանը Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է վարում: Բայց այս այցից «Մեզ համար մի փոքր տարօրինակ է՝ պարբերաբար լսել Հայաստանի դեմ հյուսիսից նախապատրաստվող որոշ առասպելական հարձակումների եւ ՀԱՊԿ-ի կողմից գոյաբանական սպառնալիքի մասին»,- բառացիորեն ասաց ՌԴ արտգործնախարարը՝ ընդգծելով նաեւ, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունն անհամատեղելի է Եվրամիությանն անդամակցությանը: Ալեն Սիմոնյանը հայտարարել է, որ Երեւանը ներկայում անհրաժեշտ չի համարում դուրս գալ Եվրասիական տնտեսական միությունից: «Հայաստանը հետաքրքրված է Ռուսաստանի հետ կապերով, եւ Հայաստանում այլ ըմբռնում չկա: Միեւնույն ժամանակ, պատերազմից հետո առաջին օրերից ի վեր, հասկանալի պատճառներով, մենք փորձում ենք կայունացնել մեր տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Իմ կարծիքով, վատ չի ստացվում»,- ասել է Սիմոնյանը:

Ինչպե՞ս բնութագրել ԱԺ նախագահի այցը այս համատեքստում, երբ ներսում այս իշխանության ներկայացուցիչներն առյուծ են կտրում, իսկ դրսում՝ կատվի հեզությամբ հանդես գալիս: ՀՀԿ փոխնախագահ **Արմեն Աշոտյանի** գնահատմամբ՝ Ալեն Սիմոնյանի այցն անցավ ««а теперь я Наташа» կարգախոսի ներքո՝ դրանից բխող բոլոր ձեւակերպումներով»:

Աշոտյանը հիշեցրեց, որ Արտաքին հետախուզական ծառայության զեկույցում բազմիցս օգտագործվում է «հիբրիդային պատերազմ» ձեւակերպումը՝ ակնարկելով Ռուսաստանին: Ռուսաստանի կողմից տարվող հիբրիդային պատերազմի մասին բազմիցս խոսել է նույն ինքը՝ Ալեն Սիմոնյանը: Թե այդ պարագայում ինչ նպատակ էր հետապնդում ԱԺ նախագահի մոսկովյան այցը, եթե չպետք է այնտեղ պարզաբանումներ պահանջեին այս հարցերի վերաբերյալ, Աշոտյանը պատասխանեց. «Չեմ բացառում, որ իրենք իրենց իշխանության ներսում որոշակի վերաբաշխում են արել, կոպիտ ասած՝ եթե Ռուբեն Ռուբինյանը թուրքական գիծն է ծածկում, ապա Ալեն Սիմոնյանն էլ ռուսական գծի պատասխանատուն է, այստեղ սրում են տրամադրությունները, գնում այնտեղ՝ փորձելով բթացնել»: Նման զիջողական-անկայուն պահվածքից ի՞նչ է շահում իշխանությունը: «Ես ցավում եմ, որ ռուսական շրջանակներից երբեմն ունեմ տպավորություն, որ իրենք էլ Ալենի՝ «а теперь я Наташа» այցի շրջանակներում խաղում են սեփական խաղը՝ «а теперь обмани меня» տարբերակով»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԴԵՄ ԱԿՑԻԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼ ԷՐ

Ալեն Սիմոնյանը վստահեցրել է, որ Երեւանը շահագրգռված է Մոսկվայի հետ կապերի պահպանմամբ եւ չի պատրաստվում որեւէ քայլ ձեռնարկել Ռուսաստանի դեմ, բայց «կան հարցեր, որոնք պետք է քննարկվեն»: Սիմոնյանի խոսքով՝ Հայաստանում գոյություն չունի «մեզ հետ կամ մեր դեմ» ընկալումը: «Մենք համարում ենք, որ դա սխալ է: Սխալ է Հայաստանի եւ այն ամենի համար, ինչ մենք ունենք (ՌԴ-ի հետ՝ խմբ.)»,- ընդգծել է նա: Նաեւ անդրադարձել է ՀԱՊԿ-ի հարցին: ԱԺ նախագահի խոսքով՝ Հայաստանի դիրքորոշումը հայտնի է. Երեւանն այդպես էլ չստացավ իր հարցերի պատասխանները: «Դա անհանգստացնում է ոչ միայն մեզ, այլեւ՝ հայ հասարակությանը: Ես դեսպանին հայտնել եմ իմ տեսակետը: Հայ հասարակության մեջ շատ բացասական են արձագանքում այն հայտարարություններին, որոնք հնչում են Մոսկվայից: Այդպես են արձագանքում, որովհետեւ Մոսկվան կարեւոր է, կարծիքը կարեւոր է, եւ այն գիտակցումը, որ Մոսկվան դաշնակից է, եղել է եւ կա: Դրա համար շատ ցավոտ է լսել նման արտահայտություններ»,- նշել է Սիմոնյանը: Հիշեցնեք, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահի գլխավորած պատվիրակությունը փետրվարի 4-7-ը պաշտոնական այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:

Բայց ոչ ոք չի տառապում հիշողության կորստով, եւ բոլորն են հիշում, թե նույն Ալեն Սիմոնյանն ու Նիկոլ Փաշինյանն ինչ հայտարարություններ են արել նույն ՌԴ-ի եւ ՀԱՊԿ-ի վերաբերյալ: Քաղաքագետ **Երվանդ Բոզոյանից** «Հրապարակը» հետաքրքրվեց՝ ի՞նչ են ցանկանում ցույց տալ իշխանությունները՝ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ համաժամանակյա սիրախաղի մեջ մտնելով, հայտնի է, որ օրեր անց Հայաստան է ժամանելու ԱՄՆ փոխնախագահ Վենսը, ո՞րն է նրանց նպատակը: Քաղաքագետն ասաց. «Նախ, սկսենք այնտեղից, որ Սիմոնյանի այցը ռուսական կողմն էր առաջ քաշել: Ռուսաստանը նպատակ ունի ասելու, որ իր համբերության բաժակն արդեն լցվում է: Հիշեցնենք, որ անգամ Կայա Կալլասը վերջերս հայտարարեց, որ Հայաստանի խնդրանքով աջակցություն է ցուցաբերելու, որպեսզի հայկական կողմը կարողանա դիմակայել հիբրիդային պատերազմին, որն իբրեւ Ռուսաստանն է սկսել: Նախորդ տարվա գարնանը Ալեն Սիմոնյանը նույնպես հայտարարել էր, որ ՌԴ-ն Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է սկսել: Մոսկվան չի կարող այդ ամենը չնկատել եւ ոչ էլ կարող է մոռանալ: Ռուսական կողմը խիստ մտահոգված է, որ Հայաստանը կարող է արտաքին քաղաքական վեկտորը փոխել, ինչը շատ ծանր է նստելու թե՛ հայ ժողովրդի, թե՛ Հայաստանի պետականության վրա: Ռուսական կողմը պարբերաբար ակնարկում է այդ մասին, սակայն, ընտրություններին ընդառաջ, Նիկոլ Փաշինյանը փորձելու է բոլոր կողմերի հետ իբրեւ թե հարաբերությունները կարգավորել: Ռուսական կողմը նաեւ ակնհայտ ակնարկներ է անում, որ չի ցանկանում Փաշինյանի իշխանության վերարտադրությունը տեսնել: Ալեն Սիմոնյանի դեմ տեղի ունեցած բողոքի ակցիան հենց դրա վառ ապացույցն էր: Որեւէ այլ պետական պաշտոնյայի այցի ժամանակ Ռուսաստանում նման ակցիաներ տեղի չեն ունենում: Ընդհանրապես, Ռուսաստանը բավականին խիստ է վերաբերվում նման հարցերին, հատկապես՝ ռուս-ուկրաինական պատերազմից հետո: Ալեն Սիմոնյանի դեմ ակցիան ռուսական կողմը խրախուսել էր, ավելին՝ այն լուսաբանվեց ռուսական կենտրոնական լրատվամիջոցների կողմից: Սա ցույց է տալիս մի հստակ բան՝ Ռուսաստանը պրակտիկորեն հասկացել է, որ Փաշինյանն իր գործընկերը չէ, Փաշինյանն ինքն էլ գիտակցում է, որ առնվազն այս փուլում չպետք է ռուսական կողմի հետ հարաբերությունները խզի, քանի որ այն մեծ խուճապ կարող է առաջացնել: Փաշինյանի իշխանությունն այլ խնդիր չունի՝ վերարտադրությունից բացի: Նրա համար չկա այլ հարց: Ցանկացած քայլ՝ Ռուսաստանի հետ սիլիբիլի անել, Վենսին գրկաբաց ընդունել եւ այլն, այս ամենն արվում է մեկ նպատակով, որպեսզի հասարակության մոտ վախեր չառաջանան, եւ ինքը հեշտությամբ վերարտադրվի: Ինչ վերաբերում է Վենսի այցին, ապա ուզում են ցույց տալ սրանով, որ կարողացել են ԱՄՆ-ի հետ լավ հարաբերություններ հաստատել, սակայն Ալիեւը բոլոր հարթակներում հայտարարում է, որ Հայաստանի հետ խաղաղությունն իր ջանքերով է հաստատվել, հետեւապես, եթե նա որոշի, որ խաղաղություն պետք չէ, ապա կարող է հեշտությամբ պատերազմ սկսել: Նիկոլ Փաշինյանը բոլոր հարցերում խաբել է հայ ժողովրդին: Խաբել է ու պատերազմ է բերել, խաբել է ու քրեաօլիգարխիկ համակարգն ավելի է արմատացրել, խաբել է, որ Հայաստանում թանկացումներ չեն լինի, սակայն մարդիկ այժմ ավելի վատ են ապրում: Մի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանի հանդեպ կա աննախադեպ դժգոհության ալիք ու կատաղություն»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԽՈՉԸՆԴՈՏԸ ԲԱՔՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀԱՅԵՐՆ ԵՆ

*«Ապրելու երկիր» կուսակցության ղեկավար **Մանե Թանդիլյանի** հետ զրուցել ենք Ռուբեն Վարդանյանի հնարավոր «դատավճռի», 2026 թ. ընտրությունների, նաեւ՝ կուտակային ֆոնդերի հետ նոր գործարքի մասին:*

Ինչպես հայտնի է, «Լիգա ինշուրանս» հայկական ապահովագրական ընկերության բաժնետոմսերը ձեռք բերեցին ավստրիական «Գրավե գրուպ» (GRAWE Group) ընկերությունը եւ «Ցե կվադրատ» ներդրումային խումբը, որը կուտակային կենսաթոշակի ֆոնդերի կառավարիչներից է: Թե ինչ ներդրում են անելու նրանք հայկական ապահովագրական շուկայում, եւ ինչ վերահսկողական մեխանիզմներ են կիրառվելու, ԿԲ-ն չի ասում:

- Ինչ լավ բան են արել կուտակային ֆոնդերը, որ մեր վարչապետն այդքան գոհ է ու հայտարարեց այդ մասին՝ «Գրավե գրուպի» եւ «Ցե կվադրատի» հետ գործարքի մասին:

- Դուք գիտեք, որ կուտակային կենսաթոշակի առաջին թոշակառուները 1974 թվականին ծնվածներն են, որոնք թոշակի են անցնելու 2037-ին: Հետեւաբար, թե ինչ լավ բաներ են արել այդ ֆոնդերը, ինձ համար հասկանալի է, իսկ շատերի համար տեսանելի կլինի այդ ժամանակ: Բայց եթե նայենք զուտ «Ցե կվադրատի» ընթացիկ գործունեությունը, զուտ շահութաբերության տեսանկյունից պետք է դիտել, թե այն գումարները, որոնք ներդրվել են, որքանով են շահութաբեր: Եթե հետեւենք, կնկատենք, որ եղել են տարիներ՝ անգամ բացասական եկամտաբերությամբ: Օրինակ, 8 տոկոս է եղել 2022-ին, եւ եթե այդ տարում, օրինակ, մեր քաղաքացիները թոշակի անցնեին, ապա նրանց թոշակները կլինեին շատ ցածր՝ բացասական եկամտաբերության պատճառով: Այդ ժամանակահատվածում, օրինակ, բանկային ավանդների եկամտաբերությունը 10 տոկոսի կարգի է եղել: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ եթե մարդիկ իրենց գումարները 2014-ից մինչեւ այսօր ներդնեին բանկային ավանդներում, ապա կունենային 10 տոկոս շահութաբերություն: Մինչդեռ այդ ֆոնդերն ունեցել են 8 տոկոս շահութաբերություն: Այսպես է պետք գնահատել, որքանով է նրանց գործունեությունը լավ կամ վատ, եթե այս պահին ենք գնահատում: Իսկ ընդհանրական գնահատականն այն ռիսկն է, որի մասին ես երկար խոսել եմ, նաեւ պարտադիր կուտակայինի ներդրման ժամանակ եմ խոսել, թե որքանով է սա շահութաբեր: Եթե այսօր այդ մարդիկ գնային թոշակի, ապա նրանց թոշակը, որն այսօր միջինը 45 հազարի կարգի է, միջին աշխատավարձ ստացողների համար կլիներ ավելի բարձր, քան իր իսկ կուտակած գումարների արդյունքում ստացած թոշակը: Ես սա հասկանում եմ, բայց ինչու եմ ասում, որ սա տեսանելի կլինի 37 թվականին, երբ առաջին թոշակառուները կլինեն, կտեսնենք այդ տարվա իրավիճակը եւ թե ինչ պատկեր կունենանք նախորդած տարիների տատանումների ու կուտակային շահութաբերության արդյունքում: Երբ որ պետություններն անկայուն վիճակում են լինում, իսկ դա հեռու չէ այսօրվա աշխարհաքաղաքական իրավիճակում, ապա կուտակային ֆոնդերից թոշակ ստացողների կյանքը խիստ դժվարանում է՝ համեմատ նրանց, ովքեր իրենց կոնկրետ աշխատանքային ստաժի արդյունքում են ստանում թոշակ: Այդ ռիսկերն ամեն օր կախված են ապագա թոշակառուների գլխին:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

- 2022-ին պաշտոնապես հայտարարվեց, որ կենսաթոշակային ֆոնդերի ցածր եկամտաբերությունը եղել է բարձր գնաճի հետեւանքով: Բայց դրանից մենք հիմա էլ ապահովագրված չենք, տնտեսական իրավիճակն անկայուն է: Որքանով է արդարացված այս իրավիճակում դրանց բերելը:

- Սա արդարացում է, ոչ թե բացատրություն: Բնականաբար, բարձր գնաճ լինելու է նաեւ հետագայում: Գնաճը տնտեսության վիճակի հետեւանք է, եւ հենց այն, որ ասում եմ՝ ռիսկային է, նաեւ այդ պատճառով, որովհետեւ գնաճն անկանխատեսելի է ու անկառավարելի, տնտեսությունն անկայուն է, շատ զգայուն՝ արտաքին ազդակներին, ինչպես նաեւ՝ ներքին տեղափոխումներին: Նման տնտեսությունների պարագայում մարդկանց ստիպելը՝ մտնել կենսաթոշակային ֆոնդ, անբացատրելի է: Իսկ վտանգն ու ռիսկը կրում է քաղաքացին, պետությունը՝ չէ, այդ ֆոնդերը՝ չէ, այլ՝ քաղաքացին, որի թոշակը դրանցից կախված պետք է լինի արդեն ամենախոցելի տարիքում:

- Որտե՞ղ են այս ֆոնդերը ներդրումներ անում: Ձեզ հայտնի՞ է իրական տնտեսության մի ոլորտ, որտեղ ներդրումներ են արվել:

- Հիմնական ներդրումներն արվում են պետական պարտատոմսերում եւ ֆինանսական կառույցներում, հիմնականում՝ բանկերում: Այսինքն, այդ ներդրումները մարդիկ իրենք էլ կարող էին անել: Պետությունը փողը վերցնում է մարդկանցից, նաեւ՝ պետբյուջեից, որից հետո պարտքով փող է վերցնում: Սա աբսուրդ է, որի մասին շատ եմ խոսել: Սրա փոխարեն պետությունը կարող էր մարդկանց թոշակները պարբերաբար բարձրացնել եւ վարել նորմալ սոցիալական քաղաքականություն՝ հետեւել թոշակի եւ միջին կենսաթոշակի զամբյուղին համապատասխանությանը:

- «Գրավե» ապահովագրականի մասին չեմ հարցնում, որովհետեւ դեռ վաղ է խոսելը:

- Այո, ոչինչ չեմ կարող ասել, բայց ընկերություններն իրենց շահույթը ստանալու են, դրանք մասնավոր ընկերություններ են, բայց մենք պետք է նայենք հանրային շահը, մարդկանց շահերը պետք է դիտարկենք: Ապահովագրական շուկան ինձ համար ընդունելի է, երբ մարդիկ ունեն կայուն եկամուտ եւ կարող են իրենց թույլ տալ՝ ապահովագրել իրենց որոշ իրավիճակներից եւ հանգամանքներից, բայց կարեւոր են մեխանիզմները, որոնք ներդրվում են նման համակարգերում:

- Բաքվի կեղծ դատավարություններում խախտվել են մեր հայրենակիցների իրավունքները: Ինչ գործիքներ եք տեսնում՝ վերականգնելու արդարությունը, ինչ կարող է անել իշխանությունը՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանն ազատելու համար:

- Մենք պարտավոր ենք օգտագործել բոլոր միջազգային հարթակները՝ բարձրաձայնելու մեր հայրենակիցների իրավունքների ոտնահարման մասին եւ վճռականորեն պահանջելու նրանց անհապաղ վերադարձը Հայաստան: ՀՀ իշխանությունները, խաղաղության համաձայնագրի բոլոր դրույթների շրջանակներում, պարտավոր են պահանջել բոլոր հայ քաղաքացիների անհապաղ ազատ արձակումը: Մինչեւ այս պահանջը չկատարվի, չի կարող լինել իրական խաղաղություն երկու երկրների միջեւ, քանի որ ապօրինաբար պահվող մեր ազգակիցներն ամենամեծ խոչընդոտն են երկկողմ հարաբերությունների բնականոն զարգացման համար:

- Ռուբեն Վարդանյանը վերջին հեռախոսազրույցում Քամյուի տեքստից էր մեջբերում արել՝ «կամ կվերածնվենք, կամ կմեռնենք»: Ինչ վիճակում է նա՝ հոգեբանական եւ առողջական, ինչ եք կանխատեսում, ինչպիսին կլինի դատավճիռը, նորից ցմամ:

- Բաքվում ընթացող «դատավարություններից» այլ բան սպասելն անիմաստ է: Ռուբեն Վարդանյանի վերադարձը պահանջում է մեր մշտական եւ վճռական ջանքերը, ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային հարթակներում: Ինչ վերաբերում է նրա հոգեվիճակին, Ռուբենը կոտրվող տեսակ չէ, եւ Բաքվից հղած նրա ուղերձները հենց այդ մասին են՝ պայքարելու, չնահանջելու եւ առաջ նայելու:

- Ձեր կուսակցությունը մասնակցելու է այս տարվա ընտրություններին: Ո՞ւմ եք տեսնում որպես ձեր հնարավոր գործընկեր, ո՞ւմ հետ կարող եք կազմել կոալիցիա: Կա՞ն ուժեր, որոնց հետ բանակցում եք:

- Այո, «Ապրելու երկիրը» մասնակցելու է առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Ներկայում ընդդիմադիր այլ քաղաքական ուժերի հետ համագործակցության շրջանակում շարունակվում են ակտիվ քննարկումները՝ ընտրություններին համատեղ մասնակցելու օրակարգով:

- Ոչ մի ուժի չե՞ք ուզում նշել՝ որպես հնարավոր գործընկեր:

- Մոտ ժամանակներում կամփոփվեն քննարկումները, եւ հանդես կգանք պաշտոնական հայտարարությամբ:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՈՂՄՆԱԿԻՑԸ 5 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ Է ՎԵՐՑՐԵԼ՝ ԲԱՆԱԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵՎ ԲՌՆՎԵԼ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Նախորդ տարեվերջին գրել էինք, որ ֆեյսբուքյան օգտատեր Տաթեւը, որը լրագրող ներկայացող, նախկինում խարդախության համար դատված, Նիկոլ Փաշինյանի ակտիվ աջակից Թերեզա Ասատրյանի դուստրն է, տեսաուղերձ է հրապարակել եւ հայտնել, որ իր մայրը կալանավորվել է: Նա տեսանյութում պատմում է, որ Ասատրյանը մի շարք հիվանդություններ ունի, անգամ՝ գլխուղեղի քաղցկեղ, ինչի համար պարտքով գումար է վերցրել, մաս-մաս վճարել, եւ, հավանաբար, հենց դա է ընկած քրեական գործի հիմքում: Մենք փորձեցինք քննչական մարմիններից պարզել, թե ինչ վարույթի շրջանակներում է կալանավորված Թերեզա Ասատրյանը, ինչ հանցանքում են նրան մեղադրում, սակայն մեզ տեւական ժամանակ պատասխանում էին, որ որեւէ քրեական գործ, որով անցնում է Թերեզա Ասատրյան անունով անձը, չկա: Երկար փնտրտուքներից հետո պարզեցինք, որ «Թերեզա Ասատրյան» ազգանունով ներկայացող անձը, որին լրագրողները մշտապես հանդիպում էին շրջիկ պատարագների ժամանակ, որը ողջունում է Նիկոլ Փաշինյանի եւ Աննա Հակոբյանի բոլոր ստատուսները, մեկնաբանություններ գրում, անպատվում Փաշինյանին քննադատողներին, իրականում անձնագրով Թերեզա Սարգսյան է, այլ ոչ թե՝ Ասատրյան:

Ըստ մեզ տրամադրված տեղեկատվության, 2022-ին Թերեզա Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չունենալով զորակոչիկին կեղծ հիվանդության ախտորոշմամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու որեւէ լիազորություն, խաբեության եղանակով Լոռու մարզի ՏՍ-ում հաշվառված զորակոչիկ Հովհաննես Մանուկյանին ձմեռային զորակոչի ընթացքում՝ կեղծ հիվանդության ախտորոշմամբ, պարտադիր զինծառայությունից ազատելու համար, վերջինիս հորից՝ Գրիգոր Մանուկյանից պահանջել եւ ստացել է խոշոր չափերով՝ 5 հազար դոլար գումար, սակայն հետագայում Հովհաննես Մանուկյանը զորակոչվել է ՀՀ զինված ուժեր: Որից հետո գումարը տված անձը, հավանաբար, բողոքել է, եւ քրեական վարույթ է նախաձեռնվել, որի շրջանակներում էլ պատարագասեր տիկինը հայտնվել է բանտում:

3 տարի տեւած դատաքննությունից հետո Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի փետրվարին վճռել է Թերեզայի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով: Դատավճիռը բողոքարկել են Վերաքննիչ դատարան, որն այն անփոփոխ է թողել, հետո՝ Վճռաբեկ դատարան, որը վարույթ չի ընդունել բողոքը, եւ Հակակոռուպցիոն դատարանի դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ՝ Ասատրյան-Սարգսյանը հայտնվել է ՔԿՀ-ում: Ընդ որում, մինչեւ դատավճռի ուժի մեջ մտնելը եղել է ազատության մեջ, հավանաբար, իշխանամետ լինելն է օգնել:

Թերեզա Ասատրյան-Սարգսյանը, հիշեցնենք, նախկինում էլ է դատվել խարդախության համար, նրա նկատմամբ ժամանակին կիրառվել է համներում: Նա 2018-ին մեծ ոգեւորությամբ ողջունել է Փաշինյանի՝ իշխանության գալը, մտերմացել է ՔՊ-ականների հետ, գուցե ինքն էլ է կուսակցական, որովհետեւ բազմաթիվ լուսանկարներ ունի ՔՊ անդամների հետ: Նա չնայած հայտարարում էր, որ կռվել է Արցախի համար, սակայն Արցախը հանձնած իշխանություններին շատ էր սիրում, իսկ Արցախը պահած իշխանությունների հանդեպ մեծ ատելություն էր տածում: Նիկոլ Փաշինյանի շրջիկ պատարագների ժամանակ նա, որպես կանոն, հարձակվում էր լրագրողների վրա, կոպտում նրանց:

ԱՅՍՏԵՂ

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ Ո՛Չ «ԲԱՐՁՐ Է ԳՆԱՀԱՏԵԼ», Ո՛Չ ԷԼ ՈՐԵՎԷ ԽՈՍՔ Է ՈՒՂՂԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՈՒ ԱԼԻԵՎԻՆ

Տիկոլ Փաշինյանի՝ Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից շնորհվող մրցանակի արժանանալու իրողությունը հայաստանյան հասարակության վրա որեւէ տպավորություն չգործեց: Արդյունքում, հերթական անգամ, դաժանաբար արհամարհված Փաշինյանին մնաց ավանդական ստախոսությամբ եւ լրատվական ձեռնածությամբ թյուր տպավորություն ստեղծել, թե իբր արտերկրում ինքն ուշադրության է արժանացել: Հերթական քարոզչական փուչիկը մեր ուշադրությանը չէր արժանանա, եթե փաշինյանական քարոզչամեքենայի ստախոսությունը չիասներ Հռոմի պապին ինչ-որ մտքեր ու գործողություններ վերագրելուն:

Այստեղ, սակայն, մեկ կարեւոր ուղղում պետք է անել. այնպես չէ, թե Միացյալ Էմիրություններում Նոբելյան մրցանակի նման մեկ անձի են ընտրել որպես Մարդկային եղբայրության Զայեդ մրցանակի դափնեկիր, եւ այդ անձը եղել է Նիկոլ Փաշինյանը: ԱՄԷ-ի կողմից մի քանի տարի առաջ հիմնադրված ամենամյա այդ մրցանակին այս տարի արժանացել են չորս անհատ եւ կազմակերպություն՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները՝ համաշխատում է Հայաստանում հենց այդ թյուր տպավորությունը ստեղծել, այլ իրականում ԱՄԷ-ի կողմից շնորհվել է երեք նույնարժեք մրցանակ, որոնցից մեկի կեսի հասցեատերը եղել է Փաշինյանը:

Հասկանալի է, Փաշինյանը երեք մրցանակից գոնե մեկ ամբողջականին արժանանա, թե միայն դրա կեսին՝ ինչպես պատահեց, թե առհասարակ ոչ մի մրցանակի չարժանանա՝ Հայաստանի հասարակության համար դա ոչինչ չի փոխում՝ ինչ ամոթանք, քննադատություն ու հայհոյանք պիտի տեղար Փաշինյանի գլխին, տեղաց: Մարդիկ նրան հայհոյելու, անիծելու, թուքումուր տալու ընթացքում նաեւ արցախահայության էթնիկ զտումը հիշեցին, եւ այսօր բարբարոսաբար վնասվող, անգամ վերացվող հազարամյա քրիստոնեական ժառանգությունն Արցախում, եւ 44-օրյա պատերազմի զոհերը, եւ Բաքվում ընթացող դատավարությունը՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության հանդեպ, եւ այլն: Արդյունքում դատարկ տաշտակի առջեւ հայտնված Փաշինյանին եւ իր կանտորային ի՞նչ էր մնում, եթե ոչ ավանդական ձեռնածությանը դիմել՝ արտերկրից որեւէ հեղինակավոր անձի խոսքը խեղդելով՝ հայ հանրության մոտ տպավորություն ստեղծել, թե իբր արտերկրում Փաշինյանին արժեւորում են:

Հայաստանյան լրատվադաշտ նետվեցին ձեւակերպումներ, թե իբր Հռոմի Լեւոն XIV պապը «բարձր է գնահատել այն հանգամանքը, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ընտրվել են որպես մրցանակակիրներ», կամ՝ «Դուք հույսի սերմնացաններ եք այն աշխարհում, որը չափազանց հաճախ պատեր է կառուցում կամուրջների փոխարեն, ասել է Հռոմի պապ Լեւոն XIV-ը՝ դիմելով Զայեդի մրցանակի դափնեկիրներ Փաշինյանին եւ Ալիեւին» եւ այլն: Զեռնածություններ եւ զեղծարարություն:

Հռոմի պապի ուղերձը Մարդկային եղբայրության համաշխարհային օրվա եւ Զայեդ մրցանակաբաշխության առիթով, բնականաբար, հրապարակված է Սուրբ Աթոռի կայքում (vatican.va), մի քանի լեզվով՝ անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, պորտուգալերեն: Ուղերձը հրապարակվել է փետրվարի 4-ին, սակայն ստորագրված է «22 հունվարի 2026» (From the Vatican, 22 January 2026): Ուղերձը կազմված է հինգ պարբերությունից, շուրջ 30-35 տող, որտեղ միայն նախավերջին պարբերությունում 3-4 տող է ներառված՝ 2026-ի Զայեդ մրցանակի դափնեկիրների մասին: Պապը, թվարկելով մրցանակակիրներին՝ Ն. Գ. Իլհամ Ալիեւ, Ն. Գ. Նիկոլ Փաշինյան, տիկ. Զաբա Յաֆթալի եւ պաղեստինյան Taawon կազմակերպություն, բոլորի մասին երրորդ դեմքով, հոգնակի թվով ասում է, որ նրանք հույս են տարածում այն աշխարհում, որտեղ շատ ավելի հաճախ պատեր են կառուցվում, քան կամուրջներ (Our laureates – His Excellency Ilham Aliyev, President of the Republic of Azerbaijan, His Excellency Nikol Pashinyan, Prime Minister of the Republic of Armenia, Ms. Zarqa Yaftali and Palestinian organization Taawon – are sowers of hope in a world that too often builds walls instead of bridges). Այնուհետ դարձյալ երրորդ դեմքով, դարձյալ բոլոր չորս դափնեկիրների մասին ասվում է երկու ֆրազ՝ By choosing the demanding path of solidarity over the easy path of indifference, they have demonstrated that even the most deep-seated divisions can be healed through concrete action. Their work bears witness to the conviction that the light of fraternity can prevail over the darkness of fratricide. Վերջ:

Ո՞ւր է այդտեղ որեւէ մեկին դիմելու, երկրորդ դեմքով խոսքն առհասարակ: Ո՞ւր է Փաշինյանի-Ալիեւի որեւէ կերպ առանձնացում Yaftaliից եւ Taawon-ից: Ո՞ւր է տեքստում թեկուզ մի տառ կամ բառ, որ Փաշինյանի-Ալիեւի՝ Զայեդ մրցանակի դափնեկիր դառնալու հանգամանքը գնահատեր՝ բարձր կամ ցածր...

Լավ, այդքա՛ն էժանագին, այդքա՛ն ստախոս, այդքա՛ն մանիպուլյատոր...

Պապն ակնհայտորեն իր ուղերձը գրել է հունվարի 22-ի ստորագրումից էլ շատ առաջ եւ գրել է այնքան ընդհանրական, որ ցանկացած մրցանակակրի վերաբերելի լիներ: Մրցանակակիրների անունները հայտնի դառնալուց հետո, ընդամենը բաց թողնված տողում լրացվել են անունները, եւ ուղերձը ստորագրվել է: Պապը ո՛չ Փաշինյանին, ո՛չ Ալիեւին ակնհայտորեն արժանի չի համարել անհատապես անդրադառնալու կամ նրանց մասին առանձնահատուկ դիտարկում անելու: Եվ նման մանիպուլյացիաներով այդ իրականությունը չի փոխվի:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԻ ՄՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Զանկեղծ ասած, մտադրություն չունեի առանձին հոդվածով անդրադառնալ Բաքվում կայացվող «դատավճիռներին», որովհետեւ հայկական մամուլը շատ գրեց այդ մասին, եւ դրանցից հերթականն ուժ չէր ունենա՝ ինչ-որ բան փոխելու, ու կվկայեր իր անօգուտ լինելը: Որովհետեւ, երբ հոդված ես գրում վարչապետի աթոռից կառչած անձի ու նրա շրջապատի մասին, նպատակ ունես «Հրապարակի» ու Ֆեյսբուքի ընթերցողներին ներկայացնելու այդ անձին այլընտրանքների առկայությունը, ինչը նպատակամղված է մեր երկրում նորմալ իշխանություն ձեւավորելուն: Այն կյանքի կկոչվի, թե ոչ՝ այլ հարց է, սակայն, որպես հոդվածագիր, փորձում ես դա մոտեցնել, որքան որ ուժերդ կներեն: Իսկ Բաքվում ընթացող դատական ֆարսի վրա քո գրածը որեւէ ազդեցություն ունենալ չի կարող ի սկզբանե: Ավելին, դա իրենց, վստահաբար, ուղղակի զվարճացնում է: Ու մարդ չի ցանկանում մասնակցել այդ ողբերգական՝ մեզ համար, ու զվարճալի՝ նրանց համար, պրոցեսին:

Բայց այսօր այդ ավանդույթը չկարողացա չխախտել, ու դրա «մեղավորը» «Հրապարակի» գլխավոր խմբագրի «Կարո՞ղ ենք ենթադրել» խմբագրականն էր: Որքան որ լուրջ, նույնքան եւ ծանր հոդված էր՝ ենթադրությունների (իրականում՝ պնդումների) վրա կառուցված: Ամբողջությամբ համաձայն լինելով ենթադրություններին (կամ պնդումներին)՝ ընդամենն ուզում եմ ավելացնել մեկ այլ հանգամանք: Դա Ղարաբաղյան շարժումը փակելու՝ նիկոլական գործողությունն է: Շարժման կարգավորման հարցին սեփական կետից մոտենալով՝ վերջինս հասավ իր նպատակին՝ շուրջ 20 տարի առաջ ձեւակերպված իր գրքում: Այն է՝ իրականում զրոյացնել շարժումն ու վերացնել դրա արդյունքները: Իսկ դա, իր հերթին, անհրաժեշտ էր, որպեսզի վերանար ադրբեջանցիների հետ քիրվայություն անելու ամենամեծ խոչընդոտը՝ Արցախի գոյությունը: Իսկ հետո արդեն կյանքի կոչվեց Ջոն Բոլթոնի՝ կարծրատիպերից ազատվելու խորհուրդը: Այն է՝ Ցեղասպանության հիշատակը՝ դրա մարմնավորման կառույցով հանդերձ, ու Արարատ սարը՝ սկզբում մուտքի ու ելքի կնիքի վրա: Իսկ այնուհետեւ, բնականաբար, պետական գերբի վրա, եթե, իհարկե, հունիսի 7-ից հետո էլ շարունակի պաշտոնավարել:

Վերադառնանք Բաքվում տեղի ունեցող դատական ֆարսին: Վարչապետի պաշտոնը զբաղեցնողը, բնականաբար, որեւէ ձեւով չպետք է խառնվի այդ դատավարությանը՝ ինչպես չխառնվեց 2023-ին Արցախը հայաթափելու ռազմական ագրեսիային: Դրանք մեկը մյուսի հետ կապված իրողություններ են: Եթե փակվել է, ինչպես ինքն է որոշել, Ղարաբաղյան շարժման էջը, ապա դրա մասնակիցներն էլ չպետք է հետաքրքրեն «իրական» Հայաստանի իշխանությանը: Նույնիսկ ավելին, Բաքվի «դատավճիռներն» անհրաժեշտ են, որպեսզի, հիշելով Արցախը, հայաստանցիները հիշեն նաեւ իրենց խեղճությունն ու այլեւս երբեք չփորձեն վերակենդանացնել այն: Դրան գումարենք այն հարցը, որ ադրբեջանական բանտում Ռուբեն Վարդանյանի ու մյուսների մնալը ձեռնտու է իրեն նաեւ քաղաքականապես: Ու եթե հանկարծ Բաքվի բռնապետը «դատավճիռների» հրապարակումից ինչ-որ ժամանակ անց ներում շնորհի մեր հայրենակիցներին, ինչպես ենթադրվում է, ապա գոնե սկզբնական շրջանում դա չի առնչվելու արցախյան ղեկավարությանը, որպեսզի հունիսի 7-ին խնդիրներ չառաջանան իշխանության վերարտադրման առումով: Իսկ մի քանի հոգու, այնուամենայնիվ, Բաքվի բռնապետը ներում կշորհի մինչեւ հունիս՝ Նիկոլին աջակցելու նպատակով:

Այնպես որ, եթե արդեն փակվել է Ղարաբաղյան շարժման էջը, ապա դրա հետ միասին «արխիվ են հանձնվել» նաեւ շարժման հետ՝ թեկուզ 20-30 տարի անց, կապված անձինք: Սա է Հայաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի մտայնությունը:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՄԱՄՈՒԼ

Փետրվարի 5-ին Բաքվում ավարտվեց Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների եւ մյուս հայ բանտարկյալների դեմ շինծու մեղադրանքների գործով՝ ավելի քան մեկ տարի տեւած կեղծ դատավարությունը: Ադրբեջանի կանխամտածված ու կանխատեսելի սցենարով, հանցավոր որոշումներով եւ մարդու հիմնարար իրավունքները կոպտագույնս խախտելով, ցմահ ազատազրկման դատապարտվեցին Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, նրա տեղակալ Դավիթ Մանուկյանը, Արցախի ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանն ու ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը: Նախկին նախագահներ Բակո Սահակյանն ու Արկադի Ղուկասյանը, իրենց տարիքով պայմանավորված, դատապարտվեցին 20 տարվա, իսկ մյուս հայ գերիները՝ 15-19 տարվա ազատազրկման:

Հիշենք. մեր հայրենակիցներին հանիրավի բանտարկեցին Փաշինյան-Ալիեւ հանդիպման հաջորդ օրը, մեկ օր առաջ, երբ եղբայրության մրցանակ ստացան հայությանը գոյանաբանական աղետներ պատճառած հայ եւ ադրբեջանցի ղեկավարները: Ադրբեջանական մասմեդիան՝ Ալիեւի խոսափող քարոզիչներից ու քարոզչակայքերից մինչեւ այլ ՁԼՄ-ներ, հերթական ցինիկ տարերքի մեջ էին՝ կապված ՀՀ քաղաքացիների «դատավարության» հետ, եւ սկսեցին կրկին մեղադրել Հայաստանին հին ու նոր «մեղքերի», «ռազմական եւ մարդկային հանցագործությունների» մեջ: Ավելին, այն դեպքում, երբ միջազգային հանրությունը, տարբեր իրավապաշտպաններ եւ կառույցներ դատապարտում են Բաքվի կեղծ դատավարությունը հայ քաղաքացիների նկատմամբ, պահանջում անհապաղ ազատ արձակել բոլոր հայ գերիներին՝ նշելով նրանց առաջադրված մեղադրանքի անհեթեթությունը, դատավարական ֆարսը, իրավունքների եւ ազատությունների ակնհայտ խախտումները եւ այլն, Ադրբեջանում լկտիության չափերն ավելի են մեծանում:

Ադրբեջանցի իշխանական քարոզիչ, քաղաքագետ Նուրանին, օրինակ, գրում է. «Միջազգային մարդասիրական իրավունքը չի վերացվել: Աշխարհը սկսեց քննարկել պատերազմի կանոնները եւ սովորույթները Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Պատերազմական պայմաններում միջազգային մարդասիրական իրավունքը վերջապես ձեւակերպվեց ՄԱԿ-ի ստեղծմամբ: Եվ, թերեւս, նյուրնբերգյան տրիբունալից ի վեր գերիշխող տեսակետն այն էր, որ պատերազմից հետո ռազմական հանցագործությունների դատարանը, անշուշտ, անհրաժեշտ է, բայց այն պետք է իրականացվի միջազգային հանրության կողմից: Սակայն այստեղ Ադրբեջանը ստիպված էր ինքնուրույն լուծել ռազմական հանցագործներին պատասխանատվության ենթարկելու խնդիրը: Ճիշտ այնպես, ինչպես մեր երկիրը անկախ իրականացրեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Ղարաբաղին» վերաբերող չորս բանաձեւերը, որոնք քառորդ դար մնացել էին թղթի վրա: Սա պահանջեց հսկայական աշխատանք, այդ թվում՝ հետախուզական ծառայությունների կողմից, որոնք պետք է բացահայտեին եւ կալանավորեին մեղադրյալներին, գլխավոր դատախազության կողմից, որը պատրաստեց մեղադրանքները, եւ պաշտպանների կողմից, որոնք ապահովեցին, որ մեղադրյալների իրավունքները լիովին պաշտպանված լինեն: Եվ հետո անընդհատ փորձեր էին արվում՝ մեղադրյալներին ներկայացնել որպես «անմեղ զոհեր», եւ պահանջում էին նրանց ազատ արձակել մինչեւ դատավարությունը»:

Բայց «խաղաղություն» կառուցող Բաքվի մառազմն այսքանով չի ավարտվում. ադրբեջանական կողմը Բաքվի գերությունից 4 հայ գերիների՝ Վագիֆ Խաչատրյանի, Գեւորգ Սուջյանի, Դավիթ Դավթյանի եւ Վիգեն Էուլջեքչյանի ազատ արձակումն ու Հայաստանին հանձնումը ներկայացնում է որպես Ալիեւի «մեծ մարդասիրության ու բարեհոգության աննախադեպ ակտ», իսկ, ահա, նախօրեին տարբեր պատժաչափերի դատապարտված մեր մյուս հայրենակիցների վաղաժամկետ կամ առհասարակ ազատ արձակումը համարում են անհնար: «Դատավարությունն անհերքելիորեն ապացուցեց, որ նրանք հրամաններ են ստացել Երեւանից: Վերջապես, Հայաստանում են Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը, ովքեր 1992 թվականից ի վեր Խոջալուի ցեղասպանության գործով մեղադրյալներ են: Եթե Հայաստանն իսկապես ցանկանում է խաղաղություն, ապա պետք է որոշի այդ անձանց արտահանձնել Ադրբեջանին, ինչպես Սերբիայի իշխանությունները մի ժամանակ արտահանձնեցին Սլոբոդան Միլոշեւիչին՝ դատավարության համար: Բայց եթե Երեւանը քաղաքական կամք չունի, կարող ենք ձեզ վստահեցնել, որ Ադրբեջանն ունի այլ միջոցներ եւ լծակներ՝ հիմնականում միջազգային օրդերներ: Միջազգային պրակտիկան այս ոլորտում բազմաթիվ հետաքրքիր նախադեպեր ունի»,- եզրափակում է ադրբեջանցի փորձագետը՝ ուղիղ արտահայտելով Բաքվի հանցավոր ռեժիմի հերթական սպառնալիքը՝ ուղղված Հայաստանին:

ՆՐԱՆՑ ԴԱՏԵՑԻՆՔ, ՀԵՐԹԸ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆՆ ՈՒ ՔՈՉԱՐՅԱՆԻՆՆ Է. ԲԱՔՎԻ ՆՈՐ ՑԻՆԻԶՄԸ

Սպասելի էր նաեւ, որ հայ ժողովրդին, Արցախյան ազատագրական պայքարին, Հայաստանի պետականությանը հասցված այս հերթական ծանր հարվածը «պատմական արդարության վերականգնում» կորակեն Ադրբեջանում, մի երկրում, որը Հայաստանի հետ «խաղաղությունը» կառուցում է Արցախը հանձնած, Արցախից, արցախցիներից, ըստ էության՝ հայ գերիներից հրաժարված փաշինյանական դավաճանական ռեժիմի հետ:

Արա ԱԼՈՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԸ՝ ԴԱՏԱԿԱՆ ՍԿԱՆԴԱԼՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Մարտունի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վահագն Դավթյանը մեղադրվում է մաքսանենգ ճանապարհով ապրանքներ ներկրելու մեջ: 2022 թվականից գործը քննվում է Հակակոռուպցիոն քրեական դատարանում: Գործում ներգրավված է մի քանի այլ պաշտոնական անձ: Ըստ «Դատալեքսի»՝ Հայկ Մելքումյանը, 2020 թ. սեպտեմբերի 4-ից մինչեւ 2021թ. մարտի 3-ն ընկած ժամանակահատվածում նախնական համաձայնության գալով ՀՀ ՊԵԿ հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի մաքսային տեսուչներ, պաշտոնատար անձ հանդիսացող Արմեն Փանյանի, Սամվել Գագիկի Համբարձումյանի եւ Ռուբիկ Խաչիկի Մարգարյանի հետ, անձնական այլ շահագրգռությունից եւ խմբային շահերից ելնելով, հօգուտ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ՀՀ քաղաքացի Վահագն Դավիթի Դավթյանի եւ ինքնությունը չպարզված անձի, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ՝ չի կատարել իր ծառայողական պարտականությունները՝ էական վնաս պատճառելով պետության օրինական շահերին, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

Այսպես. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ՀՀ քաղաքացի Վահագն Դավիթի Դավթյանը 2020թ. սեպտեմբերից մինչեւ 2021թ. մարտի 3-ն ընկած ժամանակահատվածում, նպատակ ունենալով Իրանի Իսլամական Հանրապետության տարածքից մաքսային հսկողությունից թաքցնելու եւ մաքսային ձեւակերպման ընթացակարգերը շրջանցելու եղանակով ՀՀ տարածք ներմուծել «DRIFT 7000» անվամբ, «SAE 40» մակնիշի, հանքային տեսակի ավտոմեքենայի շարժիչի յուղեր, դիմել է ՀՀ ՊԵԿ հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի աշխատակիցների հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող, նույն մաքսային կետ-բաժնի նախկին աշխատակից, հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարն առանձնապես խոշոր չափերով չվճարելու հարցում իրեն օժանդակելու պատրաստակամություն հայտնած Բագրատ Թումանյանին եւ ստացել նրա համաձայնությունը: Թումանյանն իր հերթին, պաշտոնատար անձ հանդիսացող Հայկ Մելքումյանին, Արմեն Փանյանին եւ մյուսներին համոզելու եղանակով դրդել է չարաշահել իրենց պաշտոնեական լիազորությունները, այն է՝ վերը հիշատակված ծառայողական պարտականությունները չկատարելով եւ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ ավտոմեքենաների շարժիչի յուղերը «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի շրջանցմամբ ՀՀ ներկրելու եւ այդկերպ առանձնապես խոշոր չափերի հարկեր եւ տուրքեր վճարելուց խուսափելու համար:

Մաքսային ձեւակերպումից դուրս մնացած ապրանքները տեղափոխելով Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաք՝ դրանք հանձնել է Վահագն Դավթյանին, որը մաքսանենգ ճանապարհով ներկրված ապրանքի գերակշիռ մասը վաճառել է, իսկ 2021թ. մարտի 3-ին ՀՀ ներկրված 1200 հատ տարաների մեջ լցված ավտոյուղերը 2021թ. մարտի 5-ին Վ. Դավթյանի տան բակում հայտնաբերվել եւ առգրավվել են ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից: Վահագն Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Բագրատ Թումանյանի օժանդակությամբ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը առանձնապես խոշոր չափերով չվճարելու նպատակով՝ օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող... պարտադիր այլ փաստաթղթերն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում չի ներկայացրել մաքսային մարմնին:

Վահագն Դավթյանը մեզ հետ զրույցում ասաց, որ գործը դեռ չի ավարտվել, քննություն է գնում. «Գործը չի փակվել, մինչեւ օրս ցուցմունք չեմ տվել: Ինձ սկզբից ներգրավեցին, որ ես եմ ապրանքը բերել, ռաստամոժկի գումար չեմ մուծել, ես ասել եմ, որ ես բերող չեմ: Մենք ուզեցել ենք առնենք, որ ծախենք: Իրավապահները եկել, ասել են՝ անօրինական է, ասել եմ՝ իմը չի, տարեք: Հարցրել են՝ բա ո՞վ է բերել, ասել եմ՝ չգիտեմ: Մեզ ասել են՝ ապրանք կա, ընդունեք, մինչեւ գանք: Նույն պատասխանը, ինչ Ձեզ ասում եմ, տվել եմ Նալբանդյանում, Գորիսի դատարանում: Հիմա էլ ամեն ամիս գնում-գալիս եմ Հակակոռուպցիոն դատարան: Քննություն է ընթանում, գործով 7-8 անձ է մեղադրվում, օրը մի պաշտպան չի գալիս, գործը ձգձգվում է: Էսպես ես ընկել եմ կրակը, անտեղի ցուցմունք չտալու համար, թե ապրանք բերողն ով է»:

Պարզվում է, որ մեկ այլ գործով էլ Վահագն Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով: 2024 թվականի հոկտեմբերին Գեղարքունիքի մարզի դատախազությունը Դավթյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա՝ որպես Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու 2-րդ ձեւի թույլտվություն ստանալու նպատակով, 2023թ. ապրիլից մինչեւ օգոստոսի 18-ը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ է ներկայացրել իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կեղծ փաստաթուղթ: Դատարանը Դավթյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ իր ամսական եկամտի հնգապատիկի՝ 713 հազար դրամի չափով:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴՂՅԱԿԻ ՊԱՏԸ ՔԱՆԴՎԵԼ Է, ՏՈՒՐԻՍՏՆԵՐԻՆ ԱՐԳԵԼՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼ ԱՅՆ

ԱԽԹԱԼԱ

Լոռու մարզի Ախթալա քաղաքում հառնում է գեղեցիկ շինություն, որը կառուցվել է 19-րդ դարի վերջին՝ շվեյցարական ոճով, հայ գործարար, բարեգործ Միքայել Արամյանցի կողմից: Այդ շքեղ ամառանոց-դղյակը միակն է Հայաստանի պահպանված նմանատիպ կառույցների մեջ՝ Վանաձորում գտնվող Թաիրովների տան հետ միասին: Դղյակը շուքով է կառուցված՝ հարստությամբ ու նրբագեղությամբ, եւ ժամանակին ծառայել է ոչ միայն որպես բնակարան, այլեւ՝ մշակութային կենտրոն: Այստեղ հանգստացել են Հովհաննես Թումանյանը, Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը, օպերային երգիչ Շալյապինը, ռեժիսոր Մեյերխոլդը եւ այլք:

Արամյանցի դղյակը Հայաստանի եզակի պատմաճարտարապետական կառույցներից է եւ 2016 թվականից ընդգրկված է ՀՀ պատմամշակութային հուշարձանների պետական ցանկում: Այն ոչ միայն ճարտարապետական արժեք է, այլեւ Միքայել Արամյանցի բարեգործական եւ ազգային գործունեության վկայությունն է: Այդ շենքը 1992 թ. Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիան սեփականության իրավունքով հանձնել է Տուրիզմի եւ էքսկուրսիաների հանրապետական խորհրդին, որն էլ իր հերթին 2005-ին 1 միլիոն 200 հազար դրամով վաճառել է ամերիկահայ գործարար, հետագայում մանկապղծության համար դատապարտված Սերոբ Տեր-Պողոսյանի «Մեթըլ Փրինս» ընկերությանը: Սերոբ Տեր-Պողոսյանի մահվանից հետո սեփականությունը տնօրինել է կինը՝ Մադլեն Թաշճյանը: Հետագայում ամառանոցը սեփականության իրավունքով անցել է «Լոզե» ՍՊԸ-ին, իսկ 2013 թվականից հիպոթեքի պայմանագրի հիմքով գրավադրվել է «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ում:

Կառավարությունը 2016թ. դեկտեմբերի 22-ի նիստում հավանություն է տվել մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի՝ «Միքայել Արամյանցի տուն (ամառանոց)» պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանը եւ դրա տարածքը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու առաջարկին: Նիստում նախարար Արմեն Ամիրյանը հայտնել է. «Օտարվող գույքի արժեքի փոխհատուցումը կիրականացվի ՀՀ կառավարության 2017 թվականի պահուստային ֆոնդից: Խնդրում ենք հաստատել նախագիծը եւ խնդրում ենք եռօրյա ժամկետ՝ որոշ տեխնիկական հարցեր ֆինանսների նախարարության հետ քննարկելու համար»: Որոշման նախագծում նշվել է, որ գերակա հանրային շահ ճանաչելու դեպքում հուշարձանը հնարավոր կլինի օգտագործել իր սկզբնական եւ մշակութային, ինչպես նաեւ՝ գիտական, կրթական եւ ճանաչողական նպատակներով, հնարավոր կլինի իրականացնել սեփականության իրավունքի արդյունքում կառուցվածքային փոփոխությունների ենթարկված պատմամշակութային արժեքի նախնական տեսքի վերականգնման եւ նորոգման աշխատանքներ, հնարավորություն կստեղծվի լուծել դրա զբոսաշրջային նպատակով հետագա օգտագործման հարցը: Բացի այդ, որոշման նախագծում գրված է, որ հուշարձանի օտարումը եւ վերականգնումը կնպաստեն համայնքի կողմից մշակութային ծրագրերի իրականացմանը, ինչը հնարավորություն կտա Ախթալայի, ինչպես նաեւ՝ մոտակա համայնքների բնակչությանը՝ լիարժեք մասնակցել մշակութային եւ զբոսաշրջային ծրագրերի իրականացմանը, Արամյանցի ամառանոցի շենքի գիտականորեն հիմնավորված վերականգնումը գրավիչ կդարձնի հուշարձանը, կնպաստի դեպի հուշարձան այցելությունների աճին եւ բնակչության զբաղվածության ապահովմանը:

Արամյանցի դղյակն այժմ տնօրեն ունի՝ Արթուր Գիգոլյան, որն Ալավերդու բնակիչ է: Նա ասաց, որ ներկայացնում է «Լոզե» ՍՊԸ-ն, եւ Արամյանցի դղյակն արդեն մեկ տարի գործում է որպես տուրիստական վայր, մինչեւ 7 տարեկան երեխաների մուտքն անվճար է, 7-15 տարեկանների համար վճարը՝ 1000, 15-ից բարձր անձանց համար՝ 1500 դրամ: Բայց զբոսաշրջիկների հոսքը մեծ չէ, քանի որ Ախթալան, որպես տուրիստական ուղղություն, այնքան էլ զարգացած չէ: Հարցին, թե դղյակն իրենք ումից, ինչ գնով են ձեռք բերել, Ա. Գիգոլյանն ասաց, որ հեռախոսով նման հարցերի չի կարող պատասխանել, առաջարկեց այցելել եւ տեղում զրուցել: Ախթալայի վարչական ղեկավար Սեւակ Սարգսյանը դեռ մեկ տարի առաջ մեզ ասել էր. «Որքան գիտեմ, այս պահին Լուսինե Սահակյանն է տնօրինում դղյակը»: Խոսքը փաստաբան Լուսինե Սահակյանի մասին է, որն այն ստացել է Սերոբ Տեր-Պողոսյանի պաշտպանությունն իրականացնելուց հետո:

Ախթալայի բնակիչները մեզ հայտնեցին, որ խորհրդային ժամանակ այդտեղ՝ մի քանի հեկտար տարածքում առողջարան է գործել, որին կից եղել են մշակույթի ակումբ, ճաշարան, խանութ, վարչական շենք: Անցյալ դարի 50-60-ականներին կառուցված այդ շենքերն այժմ կիսաքանդ, թալանված վիճակում են: Ախթալացիների խոսքերով՝ Սերոբ Տեր-Պողոսյանն Արամյանցի դղյակի մոտ առանձնատուն է կառուցել, որի մի մասը հյուրատուն էր: Բնակիչների վկայությամբ՝ այժմ այստեղ գործում է հյուրանոցային մի քանի սենյակ: Ամռանը, շաբաթ-կիրակի օրերին Արամյանցի դղյակն օրական 300-400 այցելու է ունենում: Բնակիչներն ասում են, որ դղյակը շատ վատ վիճակում է, 2 տարի առաջ մի պատը փլվել է: Գուցե դղյակի վատ վիճակն է պատճառը, որ զբոսաշրջիկներին արգելված է այն լուսանկարել, տեսանկարահանել: Ինչպե՞ս է պատահել, որ 2016թ. դեկտեմբերին հանրային գերակա շահ ճանաչված Արամյանցի դղյակը մնացել է որպես մասնավոր ընկերության սեփականություն, ինչո՞ւ ԿԳՄՍ նախարարությունը բավարար ուշադրություն չի դարձնում պատմամշակութային հուշարձանին եւ դրա վիճակին: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը մշակութային երկիր Հայաստանում վերացրել է մշակույթի նախարարությունը, ուստի դժվար է այդ առումով ակնկալիքներ ունենալ իշխանությունից:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՍԿ ԳՈՒՅԵ ՍԿՍԵՆՔ ՄԱՐԶԵՐԻՑ

Չկա բնակավայր, որտեղ արգելված, ապօրինի, ամոթալի գետնատարած առեւտուրը չծաղկի: Առաջին անհրաժեշտության մթերքները՝ կաթնամթերք, մսամթերք, բանջարեղեն, միրգ, ձկնեղեն, վաճառվում են անմաքուր, ցեխոտ, փոշոտ գետնից՝ թափառող շների աչալուրջ հսկողության ներքո: Տեսարանը ոչ միայն տգեղ է, այլեւ՝ հակասանիտարական: Արհամարհված են առեւտրի տարրական կանոններն ու պայմանները: Լուրջ անհարմարություններ են ստեղծվում անցորդների եւ երթեւեկողների համար: Բնակիչներն էլ, չզգալով առողջությանը հասցվող վնասների վտանգը, օգտվում են այդ «մատչելի» առեւտրից: Իսկ համայնքային իշխանությունները եւ կառավարությունը լռում են: Չնայած գետնատարած առեւտրի հիմնախնդիրը մեկ համայնքի խնդիր չէ, այն երկրով մեկ է եւ պահանջում է պետական վերաբերմունք:

Ասել, թե իրադրությունը շտկելու փորձեր չեն եղել, արդար չի լինի: Եղել են եւ՝ շատ: Բայց բոլորն էլ անպտուղ են մնացել: Որպես լրագրող՝ տասնյակ անգամներ մասնակցել եմ Լոռու մարզպետարանում եւ Վանաձորի համայնքապետարանում բացօթյա առեւտրի խնդրին նվիրված խորհրդակցություններին: Քննարկումների ընթացքում խոսվել է հնարավոր աղետալի հետեւանքների մասին, ընդունվել են որոշումներ, կոնկրետ ծառայություններին տրվել են կոնկրետ հանձնարարություններ, սակայն հենց խորհրդակցության ժամանակ արդեն պարզ էր, որ ոչ մի ծառայություն այդ որոշումների հետեւից չի գնալու, ոչինչ չի փոխվելու, այս քննարկումները կազմակերպվում են «վերադասին» ինչ-որ բան ցույց տալու՝ «պտիչկա» դնելու համար: Սա արդյոք նշանակո՞ւմ է, որ անօրինական փողոցային առեւտրի դեմ պայքարելն անհնար է կամ անօգուտ: Կարծում եմ՝ ոչ, խիստ անհրաժեշտ է: Բայց նախ հստակեցնենք՝ ինչ ենք հասկանում «պայքար» ասելով:

Պայքարը չի կարող նշանակել կտրուկ, կոպիտ միջամտություններ: Պետք է բացառել այն բռնի գործողությունները, որոնք բազմիցս տեսել ենք մայրաքաղաքում, երբ իրավապահների հսկողությամբ գազանաբար ասֆալտով մեկ շաղ են տալիս առեւտրականների մթերքը, տրորում ու փչացնում ամեն ինչ: Դա ոչ թե լուծում է, այլ՝ ավելի տգեղ տեսարան, քան փողոցային առեւտուրը: Ովքեր են գետնատարած առեւտուր անող քաղաքացիները: Շատ դեպքերում նրանք երբեմնի ուսուցիչներ են, գործարանների նախկին աշխատողներ, գործազուրկներ, ծեր ու անօգնական մարդիկ, թոշակառուներ, որոնք այսօր հայտնվել են ծանր դրության մեջ: Նրանց չի կարելի ահաբեկել կամ նվաստացնել: Եթե հնարավորություն ունենային, ինչո՞ւ պիտի կանգնեին փողոցում՝ ցրտի ու տապի տակ, արեւին ու անձրեւին, մշտական հալածվելու վախը սրտներում: Իրենք էլ մի ճոխ սուպերմարկետ հաճույքով կբացեին:

Եվ կա մի կարեւոր հանգամանք՝ թեկուզ անօրինական առեւտրի համար. այս մարդիկ գումար են վճարում: Եվ քիչ չեն վճարում: Հենց այստեղ է թաքնված փողոցում առեւտրի խնդրի մինչեւ այսօր չլուծվելու գլխավոր առեղծվածը: Նրանք պարբերաբար գումար են վճարում ինչ-որ մարդկանց, ուստի, եթե իսկապես կա ցանկություն՝ խնդիրը լուծելու, առաջին հերթին պետք է պարզել, թե ում գրպանն են հոսում առեւտրականների վճարած գումարները, եւ ինչու դրանք չեն ուղղվում հենց նույն խնդրի վերացմանը:

Պետությունը, մարզպետարանները եւ համայնքապետարանները պետք է սկսեն համակարգված աշխատանք՝ ստեղծելով հատուկ հանձնաժողովներ, կատարելով խոր ուսումնասիրություններ, բացատրական աշխատանք տանելով: Բայց սա միայն նախապայման է: Ամենակարեւորը գործնական լուծումներն են: Վանաձորի օրինակը խոսուն է: Քաղաքի գյուղմթերքների շուկան գտնվում է կենտրոնական հատվածում, ունի ծածկած եւ բացօթյա հատված, համապատասխան վաճառակետեր: Սակայն վաճառողների հոսքի թուլացման պատճառով շուկան տարիների ընթացքում խեղաթյուրվել է. գյուղմթերքների փոխարեն այնտեղ հայտնվել են խանութներ՝ հիմնականում հագուստի: Այնուամենայնիվ, դեռ կան տարածքներ, որոնք կարող են լիարժեք ծառայել իրենց նպատակին:

Պետք է մարդկանց շահագրգռել շուկա տեղափոխվելու մեջ՝ ապահովելով տարրական պայմաններ. պաշտպանություն արեւից ու անձրեւից, քամուց ու փոշուց, ջերմ միջավայր, քաղաքակիրթ առեւտրի պայմաններ: Կարելի է մի քանի ամիս չգանձել վարձավճար կամ սահմանել փողոցային «սակագնից» ցածր: Շուկա տեղափոխված վաճառողներին պետք է հստակ երաշխիքներ տրվեն, որ նրանց նախկին տեղերում՝ դրսում, այլեւս ոչ ոք չի հայտնվելու: Բացի այդ, համայնքներում միշտ կան հարմար տարածքներ, որտեղ կարելի է կառուցել էժան, ժամանակավոր ծածկեր եւ ստեղծել փոքր դինամիկ շուկաներ՝ թեթեւացնելով հիմնական շուկաների ծանրաբեռնվածությունը: Հնարավո՞ր է այս ամենը: Իհարկե: Մի պայմանով՝ եթե լինեն կամք եւ վճռականություն: Ցավոք, այս կառավարության օրոք դա շատերին անհավատալի է թվում: Սակայն փորձը ցույց է տվել, որ փոփոխությունը կարող է սկսվել ոչ թե կենտրոնից, այլ՝ առանձին համայնքներից, որոնք օրինակ կծառայեն մյուսներին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱԿ-Ը ՉԻ ԿԱՐՈՂ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԼԻՆԵԼ Ե՛Վ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, Ե՛Վ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգային կոնգրեսը մեկն է այն կուսակցություններից, որոնք արդեն հայտարարել են ընտրություններին մասնակցելու իրենց մտադրության մասին: Հայտնի է նաեւ, որ կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորելու է փոխնախագահ Լեւոն Զուրաբյանը:

Առաջին հայացքից ՀԱԿ-ը հանդես է գալիս գործող իշխանության կոշտ ընդդիմախոսի դիրքերից, Փաշինյանը եւ իր քաղաքացիական կինը՝ Աննա Հակոբյանը, ոչ միայն քննադատում, հաճախ նույնիսկ վիրավորում են ՀԱԿ ներկայացուցիչներին, այդ թվում եւ կուսակցության հիմնադիր Լեւոն Տեր-Պետրոսյանին: ՀԱԿ անդամները «ձեռքները ծալած չեն նստում» եւ պատասխանում են նույնչափ կոշտ: Թվում է, թե ամեն ինչ ժանրի կանոններին համապատասխան է՝ կա երկուստեք հայացքների հակադրություն եւ անհամատեղելիություն, ՀԱԿ-ն իսկապես ընդդիմություն է գործող իշխանությանը, քանի որ մերժում է նրանց կողմից իրականացվող քաղաքականությունը: Բայց արդյո՞ք նույն կուսակցությունը կարող է միաժամանակ լինել եւ իշխանություն, եւ ընդդիմություն:

Այն, որ այսօր ՀԱԿ-ն իշխանություն է, կարելի է դատել իշխանության առաջին դեմքերի կուսակցական պատկանելությունից. վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը ՀԱԿ անդամ է, նախագահի պաշտոնը զբաղեցնելու համար աշխատավարձ ստացող Վահագն Խաչատրյան-Խաչատուրյանը ՀԱԿ անդամ է, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը ՀԱԿ անդամ է, Փաշինյանի գլխավոր խորհրդական Լիլիթ Մակունցը ՀԱԿ անդամ է, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամքարյանը ՀԱԿ անդամ է, ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը ՀԱԿ անդամ է, Փաշինյանի կողմից դեսպան նշանակված Վլադիմիր Կարապետյանը ՀԱԿ անդամ է. այս շարքը կարելի է շարունակել ու շարունակել:

Բայց ինչո՞ւ եմ ես այս մարդկանց՝ ՀԱԿ անդամ լինելու մասին գրում ներկա ժամանակով, չէ՞ որ նրանք ՀԱԿ անդամ են եղել նախկինում, հիմա կամ ՔՊ-ական են, կամ անկուսակցական: Կուսակցական լինել՝ նշանակում է ունենալ ընդհանրություն այդ կուսակցության գաղափարախոսության հետ, դավանել նույն սկզբունքները: Մարդը կարող է փոխել իր կուսակցությունը, կուսակցության անվանումը, բայց չի կարող փոխել իր համոզմունքները, քաղաքական աշխարհայացքը, սկզբունքները, այն արժեհամակարգը, որի կրողն է ինքը: Այդ մարդիկ, ինչպես նախկինում, այսօր էլ կրում են ՀՀՇ-ՀԱԿ գաղափարախոսությունը, որպես քաղաքական գործիչ՝ նրանք ձեւավորվել են հենց այդ գաղափարախոսական միջավայրում, իշխանության մեջ լինելով էլ շարունակում են մնալ այդ գաղափարախոսության կրողներն ու իրականացնողները:

Ասվածը վերաբերում է ոչ միայն ՀԱԿ վերնախավին: Ով ծանոթ է ՀԱԿ շարքերին, կարող է հաստատ ասել, որ բազմաթիվ ՀԱԿ անդամներ միացել են գործող իշխանությանը, մարզերում ստանձնել են որոշակի պաշտոններ եւ դա արել են ոչ միայն այն պատճառով, որ ուղղակի հնարավորություն են ստացել աշխատանք ունենալու, Փաշինյանի կողմից վարվող քաղաքականությունը ՀԱԿ անդամների սրտով է, նրանց համար չափազանց ընդունելի եւ հոգեհարազատ, նրանք համոզված նիկոլապաշտներ են: Սա ասում եմ, քանի որ մի քանի տարի ուսումնասիրել եմ այդ մարդկանց: Իհարկե, կան որոշ բացառություններ եւս, բայց դրանք ավելի շուտ շեղում են օրինաչափությունից:

Այդ դեպքում ինչո՞ւ է ՀԱԿ-ը որոշել մասնակցել ընտրություններին, չէ՞ որ կուսակցությունները ընտրություններին մասնակցում են իշխանության գալու համար, իսկ ՀԱԿ-ը փաստացի իշխանություն է: Կամ՝ մի՞թե այդ կուսակցության վերնախավը, նույն Լեւոն Զուրաբյանը կամ Արամ Մանուկյանը չգիտեն, որ նախկին ՀԱԿ-ից հազիվ մի տասը տոկոսն է մնացել, եւ այդ ռեսուրսով հնարավոր չէ հաջողություն ակնկալել: Իհարկե, գիտեն: Ընտրություններին մասնակցելով՝ ՀԱԿ-ը թերեւս փորձում է լուծել երկու խնդիր. մեկ՝ պատմության առաջ մաքուր դուրս գալ՝ լվանալ Լեւոն Տեր-Պետրոսյանին, որ չստացվի, թե նրա քաղաքական եւ գաղափարական ժառանգները երկիրը հասցրին նման ծայրահեղ ծանր եւ խայտառակ վիճակի, արձանագրվի, որ ՀԱԿ-ը եւ Տեր-Պետրոսյանն այդ նույն ժամանակ եղել են արմատական ընդդիմության դիրքերում եւ սուր քննադատության են ենթարկել փաշինյանական ռեժիմին ու նրա կողմից իրականացվող քաղաքականությունը: Երկրորդ նպատակը շատ ավելի պարզ է. օգնել գաղափարակիցներին՝ մնալ իշխանության: Նախորդ բոլոր ընտրությունների փորձը ցույց է տվել, որ ՀԱԿ-ը կարող է ակնկալել 1-2 տոկոս քվե եւ ոչ մի դեպքում չի կարող հաղթահարել անցողիկ շեմը: Ընդդիմությունից տարած 1-2 տոկոսը կլինի այն նվերը, որ կարող են անել ՀԱԿ ընդդիմադիրները ՀԱԚ իշխանավորներին: Իսկ ներկա պայմաններում դա չափազանց արժեքավոր նվեր կլինի:

Պետք չէ հավատալ մարդկանց, առավել եւս՝ քաղաքական գործիչների խոսքերին, պետք է հետեւել, թե ինչի են ծառայում այդ խոսքերը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 7.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԹՈՇԱԿԱՌՈՒՆ՝ ԲԵ՞Ռ, ԹԵ՞ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԱԽՈՂՄԱՆ ՀԱՅԵԼԻ

Տխուր ու մտահոգ է կարեւորագույն ոլորտի պատասխանատու նախարար Արսեն Թորոսյանը: Նրա մտահոգության պատճառը պարզ է՝ թոշակառուներն ավելի երկար են ապրում, նրանց թիվն աճել է, եւ, նախարարի ձեւակերպմամբ, նրանք դարձել են պետության ու աշխատող քաղաքացիների «բեռը»:

«Բեռ»: Ծանր բառ է: Տարողունակ: Եկեք այն պահենք մեր մտքում այնքան ժամանակ, մինչեւ հասկանանք՝ ո՞վ կամ ովքե՞ր են իրականում բեռ: Նախարարին փոքր «ավետիս» անենք. այդ «բեռը» դեռ ավելանալու միտում ունի:

Ոչ այն պատճառով, որ մարդիկ ապրում են ավելի երկար (ինչը, ի դեպ, պիտի ուրախացնի ցանկացած առողջ պետության առողջ քաղաքացուն), այլ որովհետեւ աշխատատեղերի թիվը չի աճում: Ավելին՝ նվազում է:

Վերլուծաբաններն ու տնտեսագետներն ահազանգում են. վերջին 1-2 տարիներին փակվել է շուրջ 3 հազար բիզնես: Իսկ որքան էլ խրոխտ «արձանագրվի», թե իշխանության գալուց հետո բացվել է 200 հազարից ավելի նոր աշխատատեղ, այդ աշխատատեղերի տեղը, բովանդակությունն ու արդյունավետությունը մնում են անհայտ: Ոչ մի «արձանագրում» ինքն իրեն աշխատատեղ չի դառնում:

Այսօր ունենք մոտ 660 հազար թոշակառու եւ նպաստառու եւ ընդամենը մոտ 800 հազար աշխատող: Հարաբերակցությունը մոտավորապես 1.5 աշխատողից քիչ է՝ 1 «հոգսի» դիմաց: Զարգացած երկրներում այդ հարաբերակցությունն առնվազն 3/1 է: Եվ հիմա՝ գլխավոր հարցը: Եթե իշխանության գալուց հետո արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել՝ նոր աշխատատեղեր ստեղծելու համար, եթե պետական պարտքը չի ներդրվել գործարանների, արտադրամասերի, իրական տնտեսության մեջ, եթե միջոցները ծառայեցվել են երկրորդական, երբեմն էլ՝ պետության շահերից չբխող նպատակների համար, ապա ո՞վ է պատասխանատու, որ պետական հոգածության տակ գտնվող քաղաքացիների թիվն աճում է:

Հարգելի նախարար, Դուք նաեւ իշխող կուսակցության պատասխանատու անդամ եք՝ ՔՊ վարչության եւ կառավարության անդամ: Այս ամենի համար Ձեզ պատասխանատու չե՞ք համարում: Թոշակառուներին «բեռ» անվանելուց առաջ գուցե արժե՞ր համադրել փաստերը, անել եզրակացություններ եւ ընդունել, որ ձեր 8-ամյա կառավարման ամբողջ ընթացքում կարելի էր ու պարտադիր էր զբաղվել հենց այս խնդիրներով: Բայց փոխարենը՝ հեծանիվներ, թմբուկներ, վարչաբենդեր, «հողմաղացների» դեմ պայքար, եկեղեցու, գործարարների, հանրահայտ ու հայրենասեր մարդկանց հետապնդումներ: Եվ այդ պայքարն «արդյունավետ» դարձնելու համար անհրաժեշտ էին հսկայական ռեսուրսներ, ժամանակ, ֆինանսական միջոցներ: Պետբյուջեն բացել եք ձեր առաջնորդի սեփական գրպանի պես, շռայլորեն վարձատրում եք հնազանդ կամակատարներին՝ ի փառս երազելի, բայց այդպես էլ չկայացած հաղթանակների: Սեփական գրպանի հետ, սակայն, այդպես չէիք վարվի:

Հիմա՝ վերադառնանք «բեռ» բառին: Ո՞ւմ հասցեագրենք այն: Եթե դեռ ոմանց համար պարզ չէ, որ իրական բեռը ՔՊ-ն է ու իր անպատրաստ կառավարումը, ապա այդ «բեռը» շարունակելու է մնալ ժողովրդի ուսերին այնքան ժամանակ, որքան ժամանակ մեր իմաստուն ժողովուրդը ստիպված կլինի կրել այն:

Բայց այդ ժամանակը… մոտ է:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am